1894 ՅՈՒԼԻՍԻ 24 (Օգ. 5) ԿԻՐԱԿԻ

№ 84—ՏԱՍՆԵՒԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ—№ 84

1894 ՅՈՒԼԻՍԻ 24 (Օգ. 5) ԿԻՐԱԿԻ

Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը։
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռուբլի, 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.։ Առանձին համարը 7 կոպէկ։

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և կենտրոնական գրավաճառանոցում։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ". կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang."

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Խմբագրութիւնը բաց է ամենայն օր 10—1 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲԱՑՈՒԱԾ Է ԿԷՍ ՏԱՐՈՒԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ԱՐՁԱԳԱՆՔ"

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՅՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ը ԳԻՆԸ Է ՎՃԱՐԵԼ 6 ռ.

Բաժանորդագրութիւնն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Վելյամինովսկի փողոց, № 22, տուն Խանդալամեանի) և «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ»։

Օտարաքաղաքացիք պէտք է դիմեն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ". իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «Ardzagang»։

Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն և օտար լեզուներով։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ուսուցիչների փոխադարձ խնայողական գանձարանը։
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Ս. Էջմիածնից։ Հողային հարկերը պակասացնելու խնդիրը։ Երկաթուղու տարիֆի նոր գները։ Խիստ հսկողութիւն խօլերայով վարակուած տեղերից եկողների վրայ։ Ապրանքների տեղափոխութեան համար դիւրին միջոցներ։ Տելեֆոնի շրջանի ընդլայնումը։ Սիբիրի գիւղական հաստատութիւնների բարեփոխումն։ Խօլերայի թուլանալը Պետերբուրգում։
ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆ
ԹԵՐԹՕՆ.—Ներսիսեան դպրոցի 12 նորընտիր հոգաբարձուները։
ՖԵԼԻԵՏՕՆ.—Նրա ամուսինը։
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Արեգակ է հարկաւոր։
ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԼՈՒՐԱԳԻՐՆԵՐ
ՏԵՂԵԿԱՏՈՒ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԱՆԸ

Հայ ուսուցիչը միշտ զրկուած է եղել քաղաքակրթութեան բարիքներից. նա միշտ եղել է ներկայացուցիչ պարտքի առանց իրաւունքների. նրան միշտ քննել են, ենթարկել են հասարակական դատի (և ոչ կրիտիկայի), նրանից միշտ պահանջներ են արել, նրան միշտ ծանր բեռներ են կապել և երբէք չեն հետաքրքրուել, թէ ինչ կեանքով է ապրում նա, թէ արդեօք գոնէ ցամաք հացը նա շարունակ ունի թէ ոչ։ Նոյն իսկ հայ մամուլի այն մասը, որ շատ անգամ հարստահարել է հայ ուսուցչի եռանդը, նրա հաւատը դէպի ամեն մի ճշմարտութիւն, որ կարող է արտասանել և մտքի հարստահարիչը, նոյն իսկ այդ մամուլը հայ ուսուցչին հարստահարելով՝ նրան անուանել է «ստորաքարշ, ստրուկ», և այլն և այլն։ Բարոյական այս ծանր զրկութեան հետ հայ ուսուցիչը շարունակ կրել է նիւթական կարօտութիւն, նա յաճախ կարօտ է եղել տաք կերակուրի, իսկ իւր զաւակների ապահովութեան մասին նա դադարել է մտածելուց անգամ, ինչպէս չէր կարող մտածել մի անիրագործելի իդէալի մասին։

Առաջին հայ Ուսուցչական ժողովի ժամանակ Թիֆլիսում շօշափուեց ուսուցիչների ընդհանուր խնայողական գանձարանի հարցը և ինչպէս Ուսուցչական ժողովում ծագած շատ հարցեր, նոյնպէս և այդ հարցը մնաց անհետ և քնեց մինչև նոր ժողովի կայանալը։ Բայց մինչդեռ միւս կենսաթերթիւ հարցերն սպասում են հերթի, այդ հարցը կրկին ծնուել է Էջմիածնայ ուսումնական յանձնաժողովի շրջանում, ինչպէս հաղորդում է «Արարատ» ամսագիրը։ Խնայողական գանձարաններն այնքան ժողովրդականութիւն են ստացել և այնքան յայտնի են նրանք նոյն իսկ ամենաստորին ատեանների ծառայողների շրջանում, որ մենք միանգամայն աւելորդ ենք համարում այդ մասին երկար ու բարակ խօսել, որովհետև ոչինչ նորութիւն ասած չենք լինիլ այդ առիթով, միայն մեզ ցանկալի կը լինէր լսել հայ ուսուցիչների կարծիքն այդ մասին, թէ ինչ հիմունքների վրայ դրուին ապագայ խնայողական գանձարանները, որ կարողանան իսկապէս օգտակար լինել հայ ուսուցիչներին և կարողանան մասամբ ապահովել թէ նրանց ծերութիւնը և թէ նրանց ընտանիքը։ Սպասելով հանդերձ այս տեղեկութիւններին, մենք մի քանի յօդուածներով կը բացատրենք ապագայ խնայողական գանձարանների կազմակերպութեան անհրաժեշտ պայմանները։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻՑ մեզ հաղորդում են. «Վեհափառ Հայրապետը բարեհաճել է նշանակել Ճեմարանի տեսչութեան պաշտօնով պարոն Կարապետ Կոստանեանցին»։ Ամենայն սիրով ողջունում ենք այդ յաջող ընտրութիւնը և հաւատացած ենք, որ պ. Կ. Կոստանեանը, որ արդէն զգալի ծառայութիւն է մատուցել հայ մանկավարժութեան և գրականութեան, կ'արդարացնի կատարելապէս Վեհափառ Կաթողիկոսի յոյսերը՝ հասցնելով Ճեմարանը իւր արժանաւոր բարձրութեան։

***

Երկրագործական և պետական կալուածների նախարարութեանց մէջ վճռուած է մինչև պետական խորհրդի առաջիկայ նստաշրջանը վերջացնել մի շատ կարևոր հարցի մշակումն, որ վերաբերում է հողային հարկերի պակասեցնելուն այն դէպքերում, երբ հողերը վնասվում են բնութեան պատահարներից—կարկուտից, հեղեղից, հրդեհից և այլն. Նոր մշակուած կանոնները պիտի տարածուեն նաև անտառների վրայ, մանաւանդ այն դէպքերում, երբ նրանք հրդեհին զոհ լինին եղած։ Արտօնութեան անհրաժեշտ պայման պիտի լինի որ հողատէրերն ապացուցանեն թէ վերահաս դժբախտութեան պատճառով իրենց հողերի եկամուտը սովորական չափից աւելի պակասել է։

***

Հինգշաբթի, յուլիսի 21-ին, ելևմտից նախարար պ. Ս. Ի. Վիտտէի նախագահութեամբ պիտի կայանար երկաթուղու տարիֆի նոր գների մասին լինելիք ժողովը։ Այդ ժողովում պիտի քննուէր մարդատար գնացքների նոր գների խնդիրը. Նոր գները կը հաստատուին մինչև դեկտեմբերի 1-ը։

***

Ճանապարհների հաղորդակցութեան նախարարութիւնը շրջաբերականով կարգադրութիւն է արել, որ բոլոր երկաթուղիների վրայ խիստ հսկողութիւն նշանակուի խօլերայով վարակուած տեղերից եկող ճանապարհորդների վրայ։ Հրամանագրուած է այժմէն իսկ միջոցներ ձեռք առնել խօլերայի դէմ մրցելու։

***

Կովկասեան երկաթուղով ապրանք, մանաւանդ ցորեն և ալիւր փոխադրող առևտրականները շարունակ գանգատվում են, որ ապրանքները պահելու առանձին յարմարութիւններ չկան կայարաններում, ուր շատ անգամ ապրանքները մնում են դարսած՝ շոգեկառքերի և վագոնների սակաւութեան պատճառով։ Այժմ մայրաքաղաքի լրագրները հաղորդում են, որ ճանապարհների հաղորդակցութեան նախարարութիւնն ամեն միջոցներ ձեռք է առել ապրանքների, մանաւանդ հացահատիկների հակերի տեղափոխութիւնը դիւրացնելու համար և այդ նպատակով առաջիկայ օգոստոսի սկզբներում խորհրդակցութեան է հրաւիրել պետական երկաթուղիների կառավարիչներին։

***

ՏԵԼԵՖՈՆԻ ՇՐՋԱՆԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ

Ռուսաստանի և Կովկասեան զանազան քաղաքներում, ինչպէս յայտնի է, տելեֆոնների գծերի շինելը առաջ թողնուած էր մասնաւոր ձեռնարկողների եռանդին։ Ժամանակը ցոյց տուեց այդ մասնաւոր ձեռնարկութեան անյարմարութիւնը և դեռ 1886 թուին աւելի նպատակայարմար համարուեց որ տելեֆոնները շինուեն տէրութեան հաշուով և գտնուեն բացառապէս գանձարանի կարգադրութեան տակ. այդ իսկ պատճառով էլ մասնաւոր անձանց այլ ևս թոյլ չէին տալիս նոր գծեր անցկացնել։

Կառավարչական այդ վճռի հետ միասին նաև պակասեց տելեֆոնով օգտուելու տարեկան վճարի քանակութիւնը։ Մինչդեռ մասնաւոր ձեռնարկողները տելեֆոնի համար իւրաքանչիւր գրասենեակից ստանում էին տարեկան ոչ պակաս քան երկու հարիւր ռ. կառավարութիւնը նոր վճար նշանակեց առաջին տարին 150 և հետևեալ տարիները 100 րուբլի. մի քանի տարուց յետոյ առաջին տարուան 150 րուբ. ևս իջաւ մինչև 100։ Այժմ, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագրները, փոստահեռագրական հաստատութեանց գլխաւոր կառավարութիւնը մտադիր է 25% աւելի էժանացնել տելեֆոնների վճարը, այնպէս որ 2 վերստ հեռաւորութեան գիծն արժենայ 75 րուբլի, իսկ դրանից աւելացած իւրաքանչիւր վերստը 15 րուբլի։ Նոր գները պիտի մտցնուեն 1895 թուականի յունվարի մէկից։

Այդպիսով Ռուսաստանում տելեֆոնների վարձը կը հաւասարուի մասամբ արտասահմանում ընդունուած վարձի հետ.—Ֆրանսիայում տելեֆոնի վարձն է տարեկան 200—160 ֆրանկ, Գերմանիայում 150 պետական մարկ, Աւստրիայում 250—180 ֆլօրին։ Կովկասում տելեֆոնների գործածութիւնն ընդունուած է Բագւում, ուր ամենայետին գրասենեակն անգամ ունի տելեֆոն և Թիֆլիզում, ուր բազմաթիւ նշանաւոր հաստատութիւններ անգամ դեռ զուրկ են այդ մեծ յարմարութիւնից։

Բագւում տելեֆոնի գործը գտնւում է մասնաւոր անձի՝ Գուստավ Լիստի ձեռում, և պէտք է ճշմարիտը խոստովանած, այնտեղ՝ ուր անհամեմատ շատ են տելեֆոնով օգտուող գրասենեակները, գործարանները և մասնաւոր տները, այնտեղ անհամեմատ աւելի կանոնաւոր է դրած գործը, քան մեզ մօտ՝ Թիֆլիզում, ուր շատ աննշան է տելեֆոնից օգտուողների թիւը։ Բագուի տելեֆոնի կենդրոնական կայարանում ծառայողները բացառապէս կանայք են և վերին աստիճանի ուշադիր և արթուն իրենց պաշտօնին, մինչդեռ Թիֆլիզում տղամարդիկ են և երբեմն լիբշնում են Կովկասեան փոստային «ստարօստաներին» և «սմօտրիտելներին», որոնց համար մի պահանջ է դարձել ամեն մի ճանապարհորդի ասել՝ «ձի չկայ»։ Վատ չէր լինի եթէ Թիֆլիզում ևս կենդրոնական կայարանում ընդունէին կին ծառայողներին, որոնք աւելի ուշադիր կարող են լինել այնպիսի արագութիւն պահանջող գործում, ինչպիսին է տելեֆոնը։

***

Ներքին գործոց նախարարութեան մէջ հերթական հարցն է Սիբիրի գիւղական հաստատութիւնների բարեփոխման խնդիրը։ Նախարարութիւնը մտադիր է Սիբիրում գէմ-

---

ՖԵԼԻԵՏՕՆ

ՆՐԱ ԱՄՈՒՍԻՆԸ

Մի փոքրիկ պատմութիւն

Գրեց Մարի Ֆոն Բուլզնե

(Շարունակութիւն և վերջ *)

Բ. ՄԽԻԹԱՐԵԼՈՒ ՓՈՐՁԸ

Դարձեալ երեք տարի էր անցել այն յունիսեան երեկոյից։ Նոյեմբեր ամիսն էր. մի շաբաթ առաջ պրօֆեսոր Գէլլտրիխը վախճանուել էր թոքերի բորբոքումից։ Լրագիրները դեռ ևս լի էին երկարաբան մահազդերով և թաղման հանդիսի նկարագիրներով։

Մազերը բոլորովին ճերմակած, ընկճուած և միջակտուր, արտասուքից պղտորուած աչքերով կուճ էր նստած Հէդուիգը իւր թիկնաթոռի մէջ. Նրա առաջ նստած էր հաւատարիմ Նէոյմայէրը և փորձում էր նրան մխիթարելու. «Տիկին, ես չեմ կամենում ձեզ ձանձրացնել ընդունուած բանաձևերով, ես կամենում եմ միայն ձեր սրտին զգալի անել, թէ ինչքան անսահման է իմ ցաւակցութիւնս։ Ես գիտեմ թէ ինչ էր նա ձեզ համար, և ես գիտեմ, թէ դուք ինչ էք կորցրել նրանով»։

«Ամէն ինչ, ամէն ինչ,» մրմնջաց անմխիթար ձայնով Հէդուիգը, «ոչինչ, ոչինչ չի մնացել ինձ»։

«Մի բան միայն և հէնց դրա պատճառով էլ ես սիրտ եմ արել ձեր մօտ գալու. Նրա յիշատակը պէտք է մնայ և դրա համար դուք պէտք է առանձին աշխատանք թափէք»։

Հէդուիգն սկսաւ ականջ դնել։

Վարանոտ համեստութեամբ պրօֆեսոր Նէոյմայէրը շարունակեց. «Ձեր սիրելի ամուսնու կենսագրութեան պահանջը արդէն զգալի է։ Ամէն կողմից, այո, կ'սրող եմ հաստատ ասել, ամէն կողմից ինձ վրայ են մատնանիշ անում, իբրև ամենայարմար անձի այդ գործի համար։ Հրատարակիչ կայ արդէն, հեռաւոր շրջաններն անգամ ցանկութիւն են յայտնում, որ այդ, մեր սերնդի միջի աչքի ընկնող անձնաւորութիւնը ներկայացնուի նոյն իսկ մեր ժամանակակիցներին։ Գէլլտրիխը մեր այժմեան վարչական և տնտեսական յարաբերութիւնների ծնունդը և մասամբ առաջնորդողն է, ուստի և նրա զարգացման ընթացքը պէտք է կատարելապէս պատկերացնել։

Այժմ ես ձեր օգնութեան վրայ մեծ յոյս ունիմ, տիկին։

Ձեզնից խնդրում եմ ոչ միայն նիւթեր նրա երիտասարդական կեանքից, ոչ միայն նրա ընդարձակ թղթակցութիւնների կարգի բերելը, այլ նաև ձեր արդէն ճանաչուած ոճաբանական օգնութիւնը։ Դուրսը ամենևին չեն էլ գուշակում, սակայն ես ստոյգ աղբիւրից գիտեմ, թէ ինչքան ձեր ամուսնու վերջին երկերը—նա միշտ գանգատւում էր իւր անյաջող ոճի մասին—ձեր սահուն գրչին պարտական են»։

Առաջին անգամ այդքան շաբաթներից յետոյ մի աղօտ ժպիտ փայլեց Նրա երեսին.

«Այնպէս չէ, ես կարող եմ ուրեմն անպատճառ յոյս ունենալ ձեր վրայ։ Շատ շուտով կամենում եմ ես գիտնական հետազօտութիւններս սկսել, և դուք, տիկին, կարելի է շուտով կարող լինիք ձեր մասին աշխատանքն սկսել»։

Նա աչքերը վեր բարձրացրեց և սեղմեց բարեկամի ձեռքը. «Շնորհակալ եմ ձեզնից ի սրտէ—ես կորստեան անդունդի գլխին էի»։

Նոյն իսկ այդ երեկոյին և յետագայ օրերը նստած էր նա իւր ամուսնու առանձնասենեակում պահարանների առջև. քրքրում էր նամակները, տետրերը, պաշտօնական գրութիւնները, զանազան կապոցներ մի կողմն էր դնում, փոքրիկ տոմսեր էր դնում գրքերի մէջ և ծանօթութիւններ էր գրում. Ի բնէ խելօք և հասկացող լինելով, իբրև իւր մարդու աջակիցը, որոշ գրական վարժութեան էր ձեռք բերել, և հէնց այժմէն իսկ պարզ և որոշ էր նրա համար իւր լուծելի խնդրի տեսակն ու բաժանմունքները։

Աննկարագրելի գոհութեամբ զգաց նա աշխատանքի բուժիչ հանգստութիւնը. Միայնակ գիշերները կրկնուեցան մի քանի անգամ արտասուքների յորդահոս հեղեղները, նոյնպէս և մի քանի թղթեր քրքրելուս, ինչպէս իւր հարսնացուական նամականին—ամուսնութիւնից յետոյ միմեանցից երբէք չէին բաժանուել—երիտասարդութեան ժամանակ մօր հետ վարած թղթակցութիւնը. Բայց երկար ժամերը տանելի էին դարձել, և իւր առաջ գոնէ մի նպատակ էր տեսնում։

Այսպէս անցան մի քանի օր. ուշ գիշերով նստում էր նա բաց գրասեղանի առաջ, կարդում, դասում և կարգի էր բերում թղթերը. Երբ այդ թղթերը որոշ տեսակների բաժանուէին, կարելի կը լինէր աշխատանքն սկսել։ Հէնց նոր դուրս էր հանել մի դատարկած գզրոց, և սրբելով ծունկ չոքեց, որ աւելի դիւրութեամբ յետ մղէ և տեղը դնի, ահա նկատեց մի գաղտնի աչք. դրա շէնքը նման էր իւր մօր գրասեղանի գաղտնի աչքի շէնքին, շուտով գտաւ զսպանակը, սեղմեց և միջի եղածը դուրս ցայտեց։ Երկու նամակակապոց հանեց այնտեղից, մի հայեացք ձգեց նրանց վրայ, ապա սկսաւ տենդային հայեացքով և շունչը բռնած կարդալ մի քանի դուրս քաշած թերթեր և անձայն վայր գլորուեցաւ։

Երկար ժամանակից յետոյ սթափուեց և ուշքի եկաւ, ճրագն ու վառարանը հանգել էին. շուրջը խաւար և ցուրտ էր։ Վերկենալուս դիպաւ գրասեղանին, յանկարծ յիշեց կրկին սոսկալի յայտնագործութիւնը, ոտքի կանգնեց, ճրագը վառեց, փայտացած և դողդոջուն ձեռներով փակեց նամակները և տատանուելով ու կիսամեռ անցաւ իւր ննջարանը։ Յորդահոս արտասուքների մի տարափ վայր ձգեց նրան, ապա կրկին կանգնեց և մի դեղի տուփ հանեց դեղարանից. Բժիշկը քիչ առաջ քնադեղ էր նշանակել իրեն, բայց չխմելով իւր ամուսնու զզուանքը ամէն մի թմրեցուցիչ դեղի դէմ, նոյն իսկ իւր այրիութեան առաջին գիշերները չէր ընդունել։ Այժմ ընդունեց երեք բաժինը միանգամից և քնեց։

Դ. ՆԱՄԱԿՆԵՐԸ

Թմրած և ծանր գլխով զարթնեց միւս օրը Հէդուիգը, բաց արաւ մի քանի մխիթարանքի գրութիւններ, պատառոտեց և մաներեց այդ թղթերը, ծառաներին հրամայեց, որ ոչ մի հարցմունքով իրեն անհանգիստ չանեն և ապա ծանրաքայլ դիմեց այն սոսկալի սենեակը, ուր նամակներն իրեն էին սպասում։

Բաց արաւ գզրոցը և ահա նամակները նրա առաջն էին. առաջին կապոցի վրայ մի տոմս կար գրուած իւր ամուսնու ձեռքով՝ «Տոնի Ջուլց. ծն. 1859 թ. մեռ. 13 մայիսի 1893»։ Այդ նամակներն ուղղուած էին մի ոմն «սիրելի Վիլլի»-ին և ստորագրուած «ընդմիշտ քո Տոնին»։ Առաջին նամակներն 1876 թուիցն էին, վերջինները 1893 թուի մայիս ամսից, ուրեմն 7 ամիս առաջ գրուած։ Երկրորդ կապոցի վրայ էլ մի տոմս կար Գէլլտրիխի ձեռքով գրուած. «Այսպէս գտայ ես Նրա մահճի բարձի տակ - դրանց վրայ դրոշմուած են դեռ նրա բոլոր համբոյրները»։ Այդ իւր գրած նամակներն էին նոյն Տոնիին, նոյն ժամանակի ընթացքում։

Այժմ հասկացաւ Հէդուիգը թէ ինչ էր այնքան տանջում իւր ամուսնուն ջերմի առաջին գիշերը։ Նա շարունակ պրօֆեսոր Նէոյմայէրին էր հարցնում. Նա կամենում էր նրա հետ խօսել մի անհրաժեշտ գործի մասին, բայց երբ սա միւս առաւօտն եկաւ, զառանցում էր Գէլլտրիխը և էլ նրա գիտակցութիւնը յետ չեկաւ։ Ինքը այդ բանը վերաբերել էր մոռացուած կտակագրին և շատ ցաւել էր, որ նրա վերջին գիտակից վայրկեանները մի շատ անտարբեր գործի պատճառով խռովել էին։

Բայց այդ չէր եղել, այլ այս նամակները։

Նա հարցրեց ինքն իրեն, թէ արդեօք այնքան հպարտութիւն և հոգու ոյժ կունենա՞ր այդ նամականին առանց կարդալու այրելու։

Ինչու պիտի ստորանար ու այդ անարգ բանին ձեռք տար։

Սակայն ափսօս որ այրուած սիրտը չէ վախենում կրակից և հիւանդագին տենչանքով բոցեր է ցանկանում՝ նրանց մէջ կորչելու համար։

Միթէ չէր կարելի ենթադրել, որ դաւաճանութիւնը մեղմ կերպարանք ստանար, որ զղջումն և կամ խղճմտանքի նկատելի խայթերը իւր ամուսնուն քիչ մեղադրաւ անէին։ Այդ միակ հնարաւորութիւնն էր, որով կը լուծուէր իւր մարդու ազնիւ բնաւորութեան և այս կեղտոտ խաբեբայութեան միջև երևացող հակասութիւնը. դրանով այս դիպուածքը այնքան անըմբռնելի և բիրտ չէր երևիլ, որքան եթէ տեսնէր, որ մի սրբընկացիր ծանուցումն է փակցրած արքայական գահին։

Հէդուիգը ձեռքն առաւ առաջին թերթը, որի վրայ երէկ իւր քարացած հայեացքն էր ընկել.

«Բեռլին, 10 մայիսի 1893 թ.

«Սիրելի և միակդ իմ Տոնի,

«Իրաւունք ունիս, ես շատ երկար բացակայեցի, ահա շաբաթ է, որ միմեանց չենք տեսել. Եթէ դու միայն իմ բացակայութիւնս ես զգացել, բայց գիտես անկասկած, թէ ով առանց քեզ ապրել չէ կարող։ Ապրել չէ կարող - այս շատերն են ասում, իսկ իմ վերաբերութեամբ այդ իրականութիւն է կատարելապէս։

«Ես չեմ կարող ապրել առանց քո թրթռուն ծիծաղը լսելու, առանց քո ջերմ շուրթերդ համբուրելու, առանց քո դէր և այնպէս յատուկ պլինդ գրկող թևերիդ տակ դողալու։

«Միթէ լըջօրէն կամենում ես նեհաւելու փորձ անել։ Այդ ես երբէք չեմ կարող թոյլ տալ. Ինչ կը դառնան քո սիրելի, սպիտակ ուսերդ, որ միայն ես եմ ճանաչում.

«Եթէ հնար լինի, վաղը կը գամ ես կրկին սովորական 8 ժամին, և եթէ այսօրուան պէս տաք լինի եղանակը, կարող ենք մակոյկ վարել և քո յիշած Թփերի տակ թէյ խմել, և ապա կը վառես դու քո սենեակումդ լամպարը, ապա

*) Տես «Արձագանք» № 83.

ստվօներ մտցնել նոյն ձևով, ինչպէս կան Ռուսաստանի ներքին նահանգներում:

* * *

Մայրաքաղաքի լրագրներում տըպագրուած տեղեկութիւններից երևում է որ Պետերբուրգում խոլերան հետզհետէ թուլանում է, թէ և հիւանդացողների թիւն աւելանում է, բայց մեռնողների թիւն զգալի կերպով պակասում: Յուլիսի 14 ին հիւանդացել են 83 հոգի, մեռել են 59, իսկ 15 ին հիւանդացել են 79 հոգի, մեռել են 49: Հիւանդների ընդհանուր թիւը մի օրուան ընթացքում 715 ից իջել է 679 ի:

ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՊՈՐՏԻԶԱԿ. Պարտիզակի վրայ խօսելէ առաջ հարկ է յիշեցնել թէ լերան մը կողերուն վրայ հաստատուած է, աչքի բաւական հաճելի դիրքով մը, և կը բաղկանայ 1500 տուներէ:

Պարտիզակ գիւղաքաղաք մըն է, կեդրոն շրջակայ Թուրք, հայ և յոյն գիւղօրէներուն, և կը կառավարուի միւտիրով մը, որուն շնորհիւ գիւղը սկսած է օր ըստ օրէ յառաջդիմութեան շաւղին մէջ մտնել. փողոցներուն մէջ առջի գարշահոտութիւնը չի տիրեր ալ և սկսուած է ճամբաներու շինութեան:

Գրեթէ ամբողջ Պարտիզակ շրջապատուած է գեղեցիկ թութի պարտէզներով, այգիներով և ծառաստաններով: Օդը առողջարար է, ջուրը զով ու կազդուրիչ, ուստի օդափոխութեան յարմար վայր մը կրնար ըլլալ. սակայն դժբաղդաբար իջևանելու յարմար վայրեր չկան: Եթէ պարտիզակցին խորհէր մէկ քանի պանդոկ կառուցանել գիւղին ծայրը օտարականներու համար, ամառուան կիզիչ ամիսներուն մէջ բազմաթիւ ընտանիքներ պիտի գային վայելելու իր կազդուրիչ օդն ու զովացուցիչ ջուրը և ասով պարտիզակցիները տնտեսապէս կ'օգտուէին:

Գիւղիս մէջ գլխաւոր բարոյական երևոյթներէն մին է եկեղեցասիրութեան տկարանալը. կիրակի առաւօտ եկեղեցի գացի, գրեթէ ոչ ոք կը գըտնուէր բացի մէկ քանի ծեր կիներէ և այրերէ, որոնք անկիւնները կծկըտած երկիւղածութեամբ կ'աղօթէին, իսկ երիտասարդութիւնը անդին գինետուններն կը լեցնէր: Եւ մտածէ՛լ թէ քան տարի առաջ այս հոյակապ եկեղեցին փոքր կուգայ եղեր ժողովրդին ու որոշեր են ուրիշ եկեղեցի մըն ալ շինել, սակայն պատճառով մը կէս մնացեր է:

Կրթական վիճակը բաւական յառաջ վիճակի մէջ է: Աղջկանց և տղայոց վարժարանները կը յաճախեն ամառը 900-950 աշակերտ, իսկ ձմեռը գրեթէ 1100 աշակերտ:

Պարտիզակի կիները լաւ սովորութիւն մը ունին. կիրակի օրեր կը հաւաքուին եկեղեցին մօտ գտնուող լսարանին մէջ, Ս. Գրքէն ընթերցումներ կ'ընեն և մեր եկեղեցիին նուիրական շարականները կ'երգեն: Երիտասարդները ևս ընկերութիւն մը ունին, որուն նպատակն է գիւղին մօտ գտնուած գերեզմանատան պատերը բարձրացնել և դուռ մը շինել այդ գերեզմանատան, որ հիմա չի գործածուիր, սակայն հազիւ սկսան այդ գործը և կէս ճամբան մնացին:

Պարտիզակի մէջ կինն արդէն մեծագոյն բաժինն ունի կատարուած աշխատութեանց մէջ: Պէտք է տեսնել զինքը չերամի եղանակին: Առտուն կանուխ, մինչ ուրիշ տեղեր ամէն ոք խոր քունի մէջ է դեռ, այգիներու մէջ կը հանդիպիք թութի տերևներ տանողներու անվերջ շղթային մը, ամենքն ալ կիներ, դեռատի աղջիկներ, մինչ անդին էրիկ մարդիկ կը խորդան իրենց անկողնին մէջ կամ կը զուարճանան ու կըլլան սրճարանի մը թունալից մթնոլորտին մէջ: Կանանց այս դժուարին աշխատութիւնն, օրուան մէջ մէկ քանի անգամ կը պատահի:

Պարտիզակ թէև հայաբնակ գիւղաքաղաք մըն է, սակայն շատ մը յարանուանութիւններ մուտ գտած են հոն, որոնց ցուցակը աւելորդ կը համարիմ հոս դնել: Ինչի՞ վերագրելու է իրենց այս վիճակը. իմաստասիրական հետաքրքրութեան մը թէ չէ աւելի «աշխարհական» պատճառներու: Անցեալ տարի ալ շաբաթապահ կոչուած յարանուանութիւն մը մուտ գտաւ և ցուցակին վրայ յաւելուած մը տեղի ունեցաւ. այսօր գրեթէ 8-10 անհատներ կը հետևին այդ աղանդին: Բողոքականք հոս կը գտնուին գրեթէ 72-75 տան չափ, ունին բաւական մեծկակ ժողովարան մը, ուր գրեթէ ամէն կիրակի խուռն բազմութիւն մ'ը կը յաճախէ Տիրոջ խօսքը լսելու համար: Ամերիկեան Պորտ ընկերութիւնը հաստատած է գիշերօթիկ բարձրագոյն վարժարան մը, որ կը պարունակէ 120-130ի չափ աշակերտներ, որոնց 90ը գիշերօթիկ են և որոնց մեծամասնութիւնը կը կազմեն մերայինք. ունին 5 վարժապետ: Այս դպրոցը բաւական մեծ ծառայութիւն մը մատուցած է պարտիզակցիներուն, նմանապէս, շատ մը ընթացաւարտ տուած է, որոնք գաւառները ուսուցչութեան պաշտօնով կը պարապին. այս տարի ևս 8 ընթացաւարտ պիտի ունենայ: Չմոռնամ ըսել թէ բողոքականք մօտ օրերս մանկապարտէզ մը պիտի հաստատեն:

Կաթոլիկները փոքր թիւ մը կը կազմեն բաղդատմամբ իրենց քարուկիր եկեղեցիին և նորակառոյց մայրապետանոցին, գրեթէ 15 տուն, ունին 2 վարդապետ և չորս մայրապետ, նաև դպրոց մը' ուր կը յաճախեն 60-ի չափ տղայ:

ԹԵՐԹՕՆ

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ 12 ՆՈՐԸՆՏԻՐ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԸ

III

(Կենսագրական և այլ տեղեկութիւններ)

ԲԱԼԱԲԷԳ ՄԵԼԻՔ-ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆ

Պարոնը թէև բազմաթիւ թոռների պապ է, բայց Ներսէս-բէգից յետոյ համարվում է հայ երիտասարդութեան ամենափայլուն ներկայացուցիչներից մէկը. բաւական է ասել որ սա յուլիսի 11-ի հոգաբարձական ընտրութեանց միջոցին քուէների աւելի մեծ թիւ վաստակեց քան նոյն իսկ երիտասարդութեան օրգանի խմբագիր պ. Աղէքսանդր Քալանթարեանը, alias Կալանտարը: Յայտնի է պատանի սպայ Միլօրադովիչի պատասխանը մեծ զօրավարին, որ հեգնեց նորա երիտասարդութիւնը՝ «ձերդ գերազանցութիւն, երիտասարդ հասակը չէ խանգարում մարդուս քաջ լինել», ասաց նա. նոյն իրաւունքով պ. Մելիք-Ղարագեօզեանը կարող է ասել՝ ծերութիւնը չէ խանգարում մարդուս [illegible] յառաջադէմ լինել կամ Alter schützt vor Torheit nicht!

—

Նախ քան սորա յառաջադիմական սկզբունքների սիստեմի հետ ծանօթացնենք մեր յետադէմ ընթերցողներին—շեշտենք այստեղ մեր հերոսի վսեմ բնաւորութեան գլխաւոր յատկանիշը, այն է՝ տոկունութիւնը, որի ամենալաւ ապացոյցն է նորա «զուցակ ծառայութեանը»: Ոչ ծագմամբ (ղարադաղցի), ոչ ուսմամբ (Շուշուայ համալսարան) իրաւունքներ չունենալով պետական ծառայութեան նկատմամբ, Բալա Ղարագեօզեանը, սկսելով գիւղական գրագրի պաշտօնից դառել է նախ բէգ, ապա Փէլէզ և հասել է նօտարի պաշտօնի, պալատական (նադվօրնի) խորհրդատուի աստիճանի և այս երկար ժամանակի շրջանում մնացել է մի խորը մտածող փիլիսոփայ: Այո, պ. Բալաբէգ Մելիք-Ղարագէօզեանը «խելքից պատուհասի» յայտնի հերոսի հետ միասին կարող է ասել.

Да, чтобъ чины добыть, есть
многіе каналы;
Объ нихъ, какъ истинный фило-
софъ я сужу!

Եւ որպիսի սիրով յիշում է Բալաբէգը այդ շրջանը. մի նոր Փօզոլ պէտք է ծնուի նորա պատմութիւններն արձանագրելու, որ նա սովորաբար սկսում է հետևեալ խօսքերով՝ որոնք երբեմնական թուականներին ևրևի շատ սրամիտ էին համարուած. «Это было въ то время, когда я былъ молодъ и высокъ ростомъ», և բոլոր պատմութեան միջոցին անմեղ bonhomme-ին յատուկ ժպիտը չի թողնում նորա շրթունքները: Պէտք է տեսնէք՝ թէ ինչ ուշադրութեամբ, ինչ ակնածութեամբ են լըսում կլուբում սեղանի շուրջը խմբուած համաքաղաքացիքն այս պատմութիւնները: Երբեմն միայն ամենահետաքրքրական րոպէին, երբ աչքերը վայր թողած, Բալաբէգը պատմում է իր մի որևէ մեծագործութիւնը—Սարգիս-ապէրը՝ մի աչքը խուփ, հեգնական ժպիտը դէմքին, քթի տակ սկսում է փնթփնթալ. «Ջուրդ կոխիր փչանդ. մունք լեաւ ընք գիտում հինչ պտուղ ըս»: Բալաբէգն ընդմիջում է իր խօսքը.

—Հինչ ասեցիր, Սարգիս-ապէր:

—Ձիքիլ պեան էր, մհալ մէ դնիլ տիւ շարունակի, էշդ քշի:

Եւ նա շարունակում է, համեմելով իր զրոյցը զանազան փիլիսոփայական ճշմարտութիւններով, որ իբրև մի-մի նորութիւն հաղորդում է իր դիւրահաւատ ձևացող ունկնդիրներին՝ «մարդըս սակաւապետ պէտք է լինի, քիչով պէտք է բաւականանայ», ասում է նա և այդ միջոցին սուլիի մի մեծ կտոր դնում բերանը. «պէտք է արդարացի լինել, ամեն մի անարդարութիւն բազմաթիւ չար հետևանքներ է առաջ բերում», ասում է նա և այդ միջոցին ողջունում է իր կողքից անցնող իշխան Ջօրջաձէի աներձագին, որ վեհանձնութեամբ պատասխանում է նորա բարևին. «Հասարակական գործունէութեան հիմքը հաշուետուութիւնը պէտք է լինի», բացագանչում է նա և հինգ րոպէ չանցած առաջարկում է պ. Մելիք-Սզարեանցին իր բոլոր ազդեցութիւնը գործ դնել, որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձու ընտրուի պ. Իսահակ Բուդաղեանը, որ 7 տարի է ոչ միայն հասարակութեան, այլև կոնսիստորիային հաշիւ չէ տուել:

—

Այս վերընտրեալ հոգաբարձուի անսովոր ընդունակութեանց ապացոյցն այն է, որ երբէք իրաւաբանութիւն ուսած չլինելով՝ իրաւագէտ է դարձել և ոչ միայն ինքը այլ և շատերը Շուշիում նորան Իհերինգի գինակից են համարում: Եւ եթէ սորան աւելացնէք և այն, որ իր մեծ իրաւաբանական մտքերը գիտունին վայել համեստութեամբ և քաղաքավարութեամբ է արտայայտում, ապա հասկանալի կը լինի այն վկայականը, որ տուել է նորան Էջմիածնայ սինօդը ի 13 էն նոյեմբերի 1887 ամի:

Առաջ ենք բերում այդ վաւերագրի միմիայն վերջը, որ սև շրջանակի մէջ գրած և պատից կախուած է մեր հերոսի կաբինետում.

«Սինօդս պարտ և պատշաճ համարեաց երկարօրէն բացադրել զայդ ամենայն, զի հոգաբարձութիւնդ կարասցէ տեսանել յայտնապէս թէ՝ որպիսի ա ն հ ի մ ն բ ա ն ի ւ ք յ ա ն դ գ ն ե ա լ է մին՝ յանդամոցդ (Բալաբէգ Մելիք-Ղարագեօզեան) մ ո ռ ա ն ա լ ո չ մ ի ա յ ն զ չ ա փ ն ա ն ձ ի ն ի ւ ր ո յ և զ կ ա ն ո ն ս ք ա ղ ա ք ա վ ա ր ա կ ա ն 'ի կամիլն անարգել և արհամարհել զՍինօդս իբր ապօրինի գործող՝ և անտեղեակ իրաւանց այլ և մ ե ղ ո ւ ց ե ա լ է ը ն դ դ է մ հ ա ս ա ր ա կ կ ա ն ո ն ա ց ո ւ ղ ի ղ դ ա տ ո ղ ո ւ թ ե ա ն, իսկ հոգաբարձութիւնդ կարի անխորհրդաբար արձանագրեալ է զայդպիսի բանս ի յայտարարութեան իւրում:

Ի նկատի առեալ զայս ամենայն Սինօդս պատուիրէ գերապատիւ նախագահի հոգաբարձութեանդ Ներսիսեան հոգևոր դպրանոցին Հայոց Տփխիսու զի՝ հրաւիրեսցէ զպարոն Պօղոս Մելիք-Ղարագեօզեան մատուցանել զհրաժարական իւր յանդամակցութենէ հոգաբարձութեանն և հրաւիրեսցէ ի տեղի նորա զպաշօրդ ընտրելին»:

Եւ իբրև բազմախորհուրդ զուգադիպութեամբ սինօդի անդամ էր այն ժամանակ Երեմիա(յ) եպիսկոպոսը, իսկ այն գերապատիւ առաջնորդը, որ ի կատար ածեց սինօդի հրամանը՝ Արիստակէս եպիսկոպոսն էր: Իսկ յետոյ, տեղակալութեան օրերում... Այո, tempora mutantur, mutamur et nos in illis!

—

Պ. Բալաբէգ Մելիք-Ղարագեօզեանի այն յառաջադիմական սկզբունքների մասին մի գաղափար տալու համար, որոնք նորան այնքան սիրելի են դարձրել молодая партія-յի աչքում, մենք իբրև ժամանակակից, թէև խաւարամիտ հրապարակախօս, մի օրինակ առաջ կը բերենք այն շրջանից, որ ներկայ րոպէին Պենուայի շնորհիւ այնքան զբաղեցնում է Ֆրանսիայի պատգամաւորների ժողովին, այնպիսի աղմուկների առիթ է տուել, նոյն իսկ մենամարտութիւններ է առաջ բերել (տես ներկայ համարի քաղաքական բաժինը): Մեր խօսքը վերաբերում է մամուլի իրաւունքին՝ քննել հասարակական հաստատութեանց գործունէութիւնը: Այս օրինակը միևնոյն ժամանակ գեղեցիկ կերպով կը լուսաբանէ թէ մեր կիսակիրթ հասարակութեան մէջ ո՞վ է լուսամիտը և պրօգրեսիստը և ո՞վ խաւարամիտը և ռետրօգրադը: Ո՞ն անդր յառաջ ուրեմն:

Փրկչական 1889 և հայոց ՌՅԼԸ թուի ապրիլի 26-ին երիտասարդութեան այժմեան աչք, յառաջադէմ, լուսամիտ պրօգրեսիստ պ. Բալաբէգ Մելիք-Ղարագեօզեանը արեց Ներսիսեան դպրոցին հոգաբարձութեան հետևեալ գրաւոր «յայտարարութիւնը»:

‹Հոգաբարձութեան նիստերը լինում են գաղտնի. գաղտնի նիստերում տեղի ունեցած եղելութիւնները և գործողութիւնները չեն համարվում լրագրի նիւթեր. իսկ ‹Արձագանք› թերթը, օգտուելով որ նրա խմբագիրը իբրև հոգաբարձու, երբեմն ներկայ է լինում խորհրդի նիստերին, թոյլ է տալիս իրան հրատարակել իւր էջերում խորհրդի մէջ տեղի ունեցած խօսակցութիւնները և գործողութիւնները, այն ևս նկարագրելով նրանց իւր ցանկացած գոյներով և իմաստով:

Իմ կարծիքով այդպիսի վարմունքը չի կարելի իրաւացի համարել ո՛չ [illegible], ո՛չ բարոյական օրէնքների տեսակէտից, վասն որոյ ես առաջարկում եմ որոշել և ընդունել որ այդ դէպքերում ‹Արձագանք› թերթի խմբագիր պ. Աբգար Յովհաննիսեանցի վարմունքը հոգաբարձութիւնը [illegible] է [illegible], և պահանջել որ թերթը հրատարակէ հոգաբարձութեան մարտի 22 ին կայացած օրագիրը, իբրև պատասխան թերթի № 12 գետեղած յօդուածի դէմ տեսչի ընտրութեան վերաբերմամբ»:

կը համբուրեմ ինձ,—ա՜խ, ես տենդային տենչով փափագում եմ քո համբոյրներին:

‹Ինչպէս միշտ և յաւիտեան›

Քոյդ Վիլհելմ:

Յ. Գ. Այս վայրկենիս նամակդ ըստացայ: Հոգեակս, ես մաշու չափ սարսափած եմ: Չորս տարի էր արդէն որ սրտիդ բռնուելն անցել էր. և յանկարծ այդպէս սաստիկ կրկնութիւն: Դու լաւ կանէիր հէնց կէս գիշերին դոկտոր Պաուլուսի մօտ Շառլոտտէնբուրգ ուղարկէիր: Վաղն առաւօտ ես կը գամ մի մասնագէտ բժշկի հետ. խնամիր, խնայիր քեզ››

Լաւ յիշում էր Հէդուիգը, թէ ինչքան վշտատես էր նա մայիսի կիսին, ինչպէս նա իւր ումասպառ լինելը յանկարծական տօթին վերագրեց. և չնայելով որ Նորդդէյի ափերին անցկացրեց ամառը, բայց էլ չկազդուրուեց:

Այս էր ուրեմն......

Նամակները կարգի բերաւ շարունակաբար կարդալու համար, որպէս զի կաթիլ առ կաթիլ դատարկէ դառնութեան բաժակը: Երբ գաղտնի գզրոցը կրկին նայեց, մի քանի լուսանկար պատկերներ գտաւ ‹Տոնի› ստորագրութեամբ: Արիւնը կանգ առաւ նրա երակներում, [illegible], որ ամենայն ինչ յափըշտակել էր իրենից և սրբապղծել: Առաջին պատկերների վրայ երևում էր զուարթ, մատաղատի աղջիկ, հաստ, սևաթոյր, ուսերի վրայ թափած գէսերով, ճակատի՝ մինչև աչքերն իջնող գանգուրներով և սիրաբորբոք շուրթերով. Կազմուածքը լիքն էր, բայց ճկուն, յետագայ պատկերների վրայ հետզհետէ գերանում և ծանրանում էր դառնում, լուսանկարը հետըզհետէ մէջքը հաստացնում էր, ժապաւէններով զարդարուած զգեստները քանի գնում նեղ էին նստում վրան: Բոլոր պատկերները նոյն թարմ տեսքն էին ցոյց տալիս, բայց առաջին երիտասարդութիւնից յետոյ աչքերն սկսան աւելի յանդուգն փայլել և բերանն աւելի դռեհիկ երևալ:

Սա էր ուրեմն նրբազգաց, ազնուակեաց Վիլհելմ Գէլլտրիխի սիրականը:

Հէդուիգը կարդաց առաջին թըղթակցութիւնները. ըստ երևոյթին այդ աղջիկը Փրիդրիխ-Վիլհելմշտէտիշէ թատրոնում էր եղել, ըստ երևոյթին Գէլլտրիխը նրան հէնց առաջին բեմ դուրս գալուց հաւանել էր, սիրել, գրաւել և նրա համար մի յատուկ տուն պատրաստել:

Յիշւում էր նրա մի մօրաքոյրը, որ, ինչպէս Տոնին կատակով գրում էր, շատ դժգոհ էր պարզամիտ պրօֆեսօրից, նա իւր քրոջ աղջկան համար ամենից առաջ մի լաւ ամուսին կը ցանկար, իսկ եթէ այդ չլինէր, ‹գոնէ ռուսական մի թիկնապահ սպայ և կամ որևէ իշխան››: Ապա յիշւում էր սպասուած երեխան, Հէդուիգը տենդային յուզմունքով քըրքրեց անկապ նամակները: ‹Ի՞նչ է անում մեր Հէնսխէնը, համբուրիր նրան հազար անգամ›, կարդում էր նա, և առաջին անգամ այդ օրը լաց եղաւ նա ջղաձգաբար: Այդ արարածը նրան մի որդի էր ծնել:

Յաճախ յիշւում էր այդ Հէնսխէնը և նրան շուտով յաջորդող մի քոյրը Ալմա անունով: Այդ երկուքը մեծ դեր էին կատարում ծնողաց կեանքում: Ապա ծնուել էր մի երրորդ, թուլակազմ երեխայ, որ մի քանի օր միայն էր ապրել, և շուտով դրանից յետոյ հիւանդացել էին Հէնսխէնը և Ալման բղացաւով ու մեռել: Կրկին հոսեցին Հէդուիգի արտասուքները, սակայն այդ այլ արտասուքներ էին, սրանք ընկան իւր որդոց մահը ողբացող մօր տողերի վրան.

«Շնորհակալ եմ քեզնից ի սրտէ, շնորհակալ եմ քո բարեսրտութեանդ համար, առանց քեզ ես մեռած կը լինէի: Սարսափելի էր բաց գագաղի առաջ կանգնելը, և ես գիտեմ, որ գագաղի հետ պիտի չգնայի, անշուշտ սարսափելի կերպով լաց եղայ ես և քո վիճակդ աւելի ծանրացրի. Բայց ես ուրիշ կերպ կարող չէի»:

‹Ինչպէս գեղեցիկ խօսեց պարոն ժողովրդապետը, այնպէս չէ:

‹Կարելի է Աստուած, Որին ես ամեն օր խնդրում եմ այդ մասին, մեզ էլի մի հատ Հէնսխէն ու մի հատ էլ Ալմա կը պարգևէ›:

Բայց առ երևոյթս այս ցանկութիւնը չիրականացաւ: Սրանից յետոյ շուտով քաշուեցաւ նա Լիցէնի լճի կողմը, որտեղից բոլոր հետևեալ նամակները գրուած էին, իւր տան կահաւորումը, ծաղկանց խնամքը, մակոյկով զբօսանքները, լողանալը կարծես թէ նրան սփոփում էին այնուհետև: Յետոյ սկսում էին առաջուան նման կրկին թատրոնն ու այլ զուարճութիւնները յիշատակուել:

Ընդամենը չիսունի չափ նամակ կար և Տոնիի պատկերն արդէն որոշ գծագրուած էր: Նրա ձեռագիրը՝ նման Բեռլինի հասարակ դասի աղջկանց ձեռագրին, մի օրինակ և գեղեցիկ էր, որ այնքան զանազանւում է շատ բարձր և բարձրագոյն աղջկանց վարժարանների աշակերտուհիների խժբըշտոցներից:

Ուղղագրութիւնն ու կէտադրութիւնը բաւական ճիշտ էր, ոճը մի որոշ և անզուսպ հրապոյր ունէր: Նրա սէրը դէպի Գէլլտրիխը անկեղծ և խորին էր, երբէք էլ չէր կասկածում, միանգամ միայն յիշում էր պրօֆեսօրը կէս մի խանդով, կէս մի խայթելով մի մօրեղբօր որդի, որ նրան ու իւր մօրաքրոջը յաճախ թատրոն էր ուղեկցում: Ոչ մի տեղ նշան կա՛ր ամուսնութեան մասին, երևի դրա համար նա շատ և շատ բարձր էր նրանց աչքում: Երեխայական ուրախութեամբ շնորհաւորում էր նրան իւր-քանիւր շքանշան, անչափ հրճւում էր, երբ կայսերական երեկոյթների մէջ և նրա անունն յիշուած էր տեսնում: Եռանդով կարդում էր ‹Տեղական Համբաւաբերը›, բնական զրուցատրութեամբ խօսք էր բաց անում արտաքին աշխարհի իրերի մասին և յաճախ ցոյց էր տալիս իսկական Բեռլինուհու սրամտութիւնը:

Թատրոնը, ձիարշաւը, զօրահանդէսը, կրկէսամարդութիւնները, և օտար իշխանների քաղաք մտնելը նրա իսկական տարրն էին, սակայն երևում էր որ խելքը գլխին և տնտեսաբար էր վարւում, և միայն երբեմն գանգատւում էր ամուսնական ռոճկի շուտով սպառուելու մասին:

Ակամայ սկսաւ Հէդուիգը այդ երիտասարդ անձով հետաքրքրուել, ինչ վերաբերում էր ծագմանը, մտաւոր ուղղութեան և ճաշակին, անկասկած մի ստորին կարգի անձն էր, բայց մի իսկական, տաքարիւն ադամորդի և չնայելով իւր հասարակ տեսքին ոչ իսկական գռեհիկ: Այո, արիւնն երեսին խփած պէտք է խոստովանուէր Հէդուիգը, որ այս թըղթակցութեան մէջ իւր ամուսինը աւելի զգալի դեր էր կատարում: Նրա կոպիտ դիտողութիւններից մի քանիսը Հէդուիգին բոլորովին ապուշ կտրեցրին, մինչ դրանք երևում է Տոնիին զուարճութիւն էին պատճառում, բայց նա ինքն երբէք փառ և ստոր ոճ չէր բանեցնում: Այս յարաբերութիւնը վիրաւորում էր Հէդուիգի բնաւորութեան մէջ ամենավեհագոյնը և ցոյց էր տալիս նրա ամուսնու բնաւորութեան մէջ ստորնագոյնը:

Աճող վրդովմունքով Հէդուիգը մտածում էր այն ժամանակին, երբ ինքը ծանօթացել էր Գէլլտրիխի հետ: Նամակները յայտնի նեարդային էին դառնում, այժմ առաջին անգամ կասկածել էր սկսում Տոնին իւր սիրահարի վրայ և թափում էր նրա գլխին անհամար յանդիմանութիւններ, մինչդեռ նա զուր էր աշխատում հանգստացնելու նրան: Ապա հետևում էր նշանադրութիւնից անմիջապէս յետոյ գրուած մի նամակ. ‹Հաւատա՛ ինձ, որ ես քեզ մշտական բարեկամ պիտի մնամ, որ ես երբէք ձեռքս քեզնից պիտի չքաշեմ, որ քո նիւթական վիճակդ ոչ մի կերպ չպիտի վատանայ: Բայց դու գիտես, որ ես ամուսնանում եմ, և որ այս պատճառով մեր յարաբերութիւնները բոլորովին և յաւիտեան պիտի փոխուեն›: Բայց Գէլլտրիխը նոյնը պիտի միշտ կըրկնէր, միշտ հետևում էին կրքոտ գանգատներ և սրտաշարժ աղերսներ:

Ահա իրենց հարսանեկան ուղևորութիւնից երկու շաբաթ վերջը - մի առանձին բուռն յուսահատութիւնից յետոյ, Գէլլտրիխը նրան այցելում է: Եւ այլ ևս պարզ էր,—բոլորովին պարզ—որ ամեն ինչ երկուսի մէջ այնպէս էր, ինչպէս առաջ.

Մեռելատիպ տեսքով և դողդողալով Հէդուիգը հազիւ կարողանում էր նամակները կարդալ: Անսահման ստորացումն. այս կեանքը ‹երեքով› իւր բոլոր գռեհիկ և վիրաւորիչ մանրամասնութիւններով լուծում էր նրա ամեն մի կաթիլն արեան, ուտում էր նրա ամեն մի մկանունքը: Իւր կեանքի գեղեցկագոյն և քնքուշ ժամերը սրբապղծուած էին և հայհոյուած:

Այս սակաւաթերթ նամակները նորանոր կողմեր չբաց արին, միայն իւր ամուսնու մեղապարտութեան զգացումը կարծես երբեմն նրա լեզուին աւելի կըրքոտ եղանակ էին տալիս: Նրանք միմեանց քիչ անգամ էին հանդիպում, բայց անզօր դառնութեամբ նկատում էր Հէդուիգը, որ երկուսը՝ իւր միջամտելուց յետոյ աւելի սերտ և անլուծանելի էին շղթայուած:

Վերջին նամակը կարդալուց յետոյ ժողովեց ամենը և կապեց: Առաջին անգամ, երբ նրա հայեացքն ընկել էր այդ դաժանի թերթերի վրայ, այն զգացումն էր ունեցել, որ այլևս չէ կարող իւր երջանկութեան այս ոչնչացումից յետոյ ապրել: Այժմ աւելի ևս խստութեամբ, աւելի բուռն կերպով ցանկանում էր ոչնչութեան խաղաղութեանը, այս անտանելի տաղնապի վախճանը:

Նա այլևս ընտրութեան տեղիք չունէր, նա չէր կարող այլ ևս ապրել:

Մեծ աշխատանք գործ դրաւ իւր վրդովմունքը մեղմացնելու, փորձեց իւր ամուսնուն արդարացնելու, ինքն իրեն համոզում էր, որ շատերը նրա սխալները գեղեցկացնելով կ'արդարացնէին: Նա յիշեց, որ Գէլլտրիխը մի անգամ ասել էր՝ ‹Տեսնո՞ւմ ես ինչ կայ, դժբախտաբար երկար ժամանակ անցաւ մինչև իմ երիտասարդ դառնալը›:

«Միայն երեսնական տարիքի կիսում իմ և ծնողներիս օրական ապրուստի հոգսից ազատուեցայ: Յետոյ միայն երիտասարդ դարձայ, անսահման երջանիկ, բայց այդ տարիքում դա շատ վտանգաւոր խաղ է: Ես հէնց այն ժամանակ պիտի ամուսնացած լինէի, բայց դու չը կայիր այն ժամանակ›: Եւ նա իրեն համբուրում էր սիրաբորբոք: Առաջին ան-

Այս յայտարարութեան քննելու միջոցին հոգաբարձական նիստում յետադէմ, խաւարամիտ, ռետրօգրադ Եւանգուլեանցը արտասանեց մի ճառ մամուլի ազատութեան մասին, որ in extenso առաջ ենք բերում այստեղ.

«Պ. Եւանգուլեանցն յայտնեց, թէ պ. Մելիք-Ղարագեօզեանի յայտարարութիւնը նա երկու տեսակէտից է քննում. մէկը ընդհանուր՝ մամուլի շահերի տեսակէտից և միւսը մասնաւոր՝ վերաբերեալ հոգաբարձութեան անդամ պ. Արգար Յովհաննիսեանի: Ընդհանուր տեսակէտից նայելով, պ. Եւանգուլեանցը չէ կարող համակրել պ. Մելիք-Ղարագեօզեանցի յայտարարութեանը, քանի որ կարծում է, թէ հրապարակական քննութիւնը ամենահարկաւոր պայմանն է, որ այդ գործունէութիւնը օգտակար և նպատակայարմար լինի. մանաւանդ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան գործունէութեան քննադատութիւնը հարկաւոր է, որովհետև մենք, հոգաբարձուներս, տարօրինակ դիրք ենք բռնել. ոչ մեր հոգևոր իշխանութեան ենք պարտական համարում մեզ՝ հաշիւ տալ, ոչ էլ հասարակութեան, որ մեզ ընտրել է: Պ. Եւանգուլեանցը համոզուած է եղել, որ լրագրութիւնը իբրև հասարակաց կարծեաց ներկայացուցիչ, կատարեալ իրաւունք ունի, մինչև անգամ պարտաւորական է, քննութեան ենթարկել հոգաբարձութեան գործունէութիւնը, իսկ հոգաբարձութեանը մնում է, եթէ լրագրաց մէջ արծարծած հարցերի քննադատութեան մէջ պատահում են ճշմարտութեան դէմ շեղումներ, այս հանգամանքում ճշմարտութիւնը վերականգնեցնել պաշտօնական հաղորդագրութեամբ: Այսպէս ուրեմն ընդհանուր հարցը, պ. Եւանգուլեանցի կարծիքով, պիտի վճռուի յօգուտ ազատ քննադատութեան մամուլի կողմից հոգաբարձական գործունէութեան: Դալով մասնաւորին, պ. Եւանգուլեանցը ասաց՝ եթէ մամուլը իրաւունք ունի անել քննադատութիւն, այդ իրաւունքը հաւասար պիտի լինի բոլորի համար էլ և այն հանգամանքը, որ «Արձագանքի» խմբագիրը պատահաբար հոգաբարձու է, ոչինչ ազդեցութիւն չպէտք է ունենայ «Արձագանքի» վերայ, որովհետև այդ կը նշանակէ, որ միւս լրագիրը, որի խմբագիրը պատահաբար հոգաբարձու չէ, աւելի լաւ պայմաններում է գտնվում, քան «Արձագանքի» խմբագիրը, որ կրում է հոգաբարձուի պատասխանատու պարտաւորութիւնները. միւս լրագիրը կարող է ուրիշ աղբիւրներից ամեն տեսակ տեղեկութիւններ հաւաքել հոգաբարձական գործերի վերաբերութեամբ: Պէտք է կարծել, որ «Արձագանքի» խմբագիրը, լինելով հոգաբարձու, աւելի միջոցներ ունի տեղեկանալու հոգաբարձութեան գործունէութեան մասին, բայց մենք տեսնում ենք, որ «Մշակ» լրագիրը, որի խմբագիրը հոգաբարձու չէ, ոչ պակաս տեղեկութիւններ է հաղորդում հոգաբարձական գործունէութեան մասին:

Բոլոր վերոյիշեալ հիմանց վերայ պ. Եւանգուլեանցը յայտնում է, որ նորա կարծիքով պ. Մելիք-Ղարագեօզեանցի առաջարկութիւնը պիտի թողնուի առանց հետևանքի, հանելով նորա այն մասը, որի մէջ պ. հոգաբարձուն առաջարկում է վերականգնեցնել «Արձագանքի» յօդուածի անճշդութիւնը, և եթէ միայն հոգաբարձութիւնը ևս համոզուի, որ կայ պ. Մելիք-Ղարագեօզեանցի ցոյց տուած անճշդութիւնը, նա կատարեալ իրաւունք ունի այդ անելու»:

Մի այլ խաւարամիտ, այն է՝ իշխ. Կոնստ. Բեհբութեանցը ի միջի այլոց ասաց՝

«Համաձայնելով պ. Եւանգուլեանցի ասածներից շատի հետ, կարևոր եմ համարում աւելացնել, որ հայկական դպրոցները, որոնք իրենց արտաքին կազմակերպութեամբ բարեբաղդաբար նման են անգլիական դպրոցներին, որովհետև նոքա միևնոյն ժամանակ կախուած են թէ հասարակութիւնից և թէ գտնվում են եկեղեցու հովանաւորութեան ներքոյ, ուստի և պէտք է աշխատեն ըստ կարելւոյն սերտ կապ հաստատել հասարակութեան հետ: Այս նպատակին հասնելու համար, կարծում եմ, որ հոգաբարձական խորհրդի բոլոր գործողութիւնները կարող են և պէտք է մամուլի քննութեան առարկայ լինին»:

Հա՜րկ է արդեօք աւելացնել, որ հոգաբարձութիւնը բազմութեամբ բոլոր ձայների երկուսի դէմ (Բալաբէգ Մելիք-Ղարագեօզեանի և նորա alter ego Ներսէս բէգ Աթաբէգեանի) մերժեց պ. Մելիք-Ղարագեօզեանի անվայել առաջարկը:

Ի՞նչ կարող է աւելի բնորոշ լինել յետադիմական և յառաջադիմական ուղղութիւնները գծագրելու համար քան պ. Մելիք-Ղարագեօզեանի ազատամիտ առաջարկութիւնը և պ. Եւանգուլեանցի յետադէմ ճառը: Եւ հասարակութիւնը (!) սըրբագործեց պ. Բալաբէգի ուղղութիւնը՝ հոգաբարձու ընտրելով նորան, և դատապարտեց պ. Եւանգուլեանի արտայայտած գաղափարները՝ նոյն իսկ իր եկեղեցւոյ 3 ներկայացուցիչներից մէկը նորան չընտրելով: Երջանիկ հասարակութիւն... Բայց ո՛չ, ես ըղձում եմ, որ սկսեցի վեհ ոճով գրել, «քաղաքացիական վիշտ» արտայայտել, մինչդեռ թերթօնագրի պաշտօնն է թեթև ոճով զրուցել, սրամիտ լինել... Թիւրթիւ խմբագիրը, որ հին գերմանական ուսանող է, ինձ խրախուսելու համար, թերթօնիս սրամտութիւնը ապահովելու համար, մինչև անգամ ինձ այսօր հիւրասիրեց «Լօնդոնում» առաջս հինգ շիշ Միւնխէնի իսկական գարեջուր դնելով: Ո՛չ, ես ապերախտ չեմ գտնուիլ դէպի իմ խմբագիրը և թէև թոյլ բանաստեղծ, բայց ոտանաւորով կ՚երգեմ իմ հերոս Բալաբէգին, գլխիս նորան մի նոր բալա շինելով: Canol

—

ԱՆՎՆԱՍ ՄԱՐԴ

Հետևելով միշտ օրինաց աշխարհի
Ես կեանքումս մարդու վնաս չի արի,
Դատաւորի աստիճանով ու չինով
Մարկոսից յետ երկրորդն էի ես խելքով.
Չէ՞ք հաւատում, թուղթ կը բերեմ Իգդիրից
Անմեղ ըմբոստ փիլիսոփայ Դրէպերից:
Տունըս առատ կախէթական խմիչքով,
Սնդուկներս լի գակլադնօյ-պայերով,
Օղլուշաղս հլու սպասում հրամանիս.
Անպակաս էր բուբլի թուման գրպանիս:
Բայց ո՞վ տեսաւ երկրիս վրայ անփուշ վարդ,
Այսպէս յաւէրժ փառքով լցեալ չի կայ մարդ.
Այո՛, հասան ինձ էլ օրեր դառնագին,
Բայց ի զուր, զի յանցաւոր չէր իմ հոգին:
Հետևելով միշտ օրինաց աշխարհի
Ես կեանքումս մարդու վնաս չի արի:
Դարձայ անգամ ես բանկային խորհրդի,
Փոխադարձ էր, այո՛, անունն այդ վարկի.
Իմ քեռորդուց Եղաջանին, Ջամփրին
Պաշտօն տուի և ռոճիկ վեց կատերին:
Բողոքեցին, հարա՜յ տուին, պոռացին

Դուշմաններս, իմ անունը կոտրեցին,
Ինչ է—երկու պլեմեանիկ դրի այնտեղ,
Իսկ Մարկոսը եօթն է խցկել ամեն տեղ:
Հետևելով միշտ օրինաց աշխարհի
Ես կեանքումս մարդու վնաս չի արի:
Մի օր ինձ մօտ եկաւ մի խեղճ վրաց իշխան,
«Ընկեր լինինք», ասաց, «իմ նոր գինեպան»:
Դարձանք ընկեր, տանտէրը լաւ բան է,
Բայց վրացին կարծում էր թէ դա թան է:
Ասի կախէթուն խաղողենք պարսկական գինին.
«Չէ», ասում է «ես չեմ գիժիլ կեղծիքին».
Շատ ասացի, շատ խրատեցի, չլսեց.
Ի զուր տեղից թունդ բարկացաւ ու զզուեց:
Վրացու մէկը ես կայ, ես չէ ինձ համար
Փուչը թողած՝ չեմ ուտելու հօ ձաւար...
Հետևելով միշտ օրինացն աշխարհի,
Ես կեանքումս մարդու վնաս չի արի:

Բայց նկատում եմ, որ ընթերցողին աւելի հաճելի կը լինէր, որ ես Ղարաբաղի բարբառով երգէի, սակայն «ո՛ տայր ինձ ծուխ ծխանի», ուստի թող գոհ լինի նա, եթէ «աւուր պատշաճի» մի ժողովրդական երգի հատուած առաջ բերեմ այստեղ.

Մեր չալնիկը կոտրալ ա, կոտրալ ա,
Հարկաւէր ա կոտրալ ա, կոտրալ ա,
Էշը բաղը քանդալ ա, քանդալ ա,
Փալանը եր կալ տօն եկ հա՛, տօն եկ:

Մ—խ—:

Յ. Գ.—Հետևեալ թերթօնը պ. Իսահակ Բուդաղեանեանցին նուիրուած չի լինիլ:

Le même.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐԵՒԱԿ Ի ՀԱՐԿԱՒՈՐ

Արեգակն է երկրագնդի կեանքի աղբիւրը, արեգակն է կենդանացնում բակտերիաները և արեգակն է նրանց մեռցնում: Ոչ միայն բուսական և անասնական կեանքը այլ և իդէաներն արեգակից են ստանում իրենց լոյսը, գոյնը, կենսականութիւնը: Արեգակի բացակայութիւնը մարդուն դարձնում է մռայլոտ, մաղձոտ: Գիշերը մտքին հաղորդում է անհանգիստ լարումն, խլում է մտքի անդորրութիւնը. դժգոյն է լինում նրա ծնունդը:

«Վերադարձէք արեգակին», բացականչում է նորվեգիական աշխարհահռչակ հեղինակ Բեռնսօնը: Թող բոլոր բժիշկները միաձայն գոչեն.— «վերադարձէք արեգակին:» Թող բըժշկական ժողովները միաձայն վճռեն կայացնեն որ արեգակն անհրաժեշտ է ամենքի համար:

Անհրաժեշտ է խաչակրաց արշաւանք հրատարակել երեկի այժմեան դրութեան դէմ, երբ գիշերը դարձել է ցերեկ, իսկ ցերեկը՝ գիշեր: Գիշերային աշխատանքն ահագին ոյժ է խլում մարդուց. մեր գիշերային ժողովարաններում օդը վնասաբեր է, ծանր է և այդ պատճառով մարդիկ հարկադրուած են լինում հետզհետէ աւելի և թէկի գրգռիչ միջոցների դիմել իրենց եռանդը պահպանելու համար:

Ազգաւութիւնը պատսպարվում է ստորերկրեայ ներքնայարկերում: Բարձր տները, իրենց նեղ բակերով զրկում են բնակիչներին արեգակից: Բարձր դասակարգի մարդիկ ամենալաւ բնակարաններում բնակուելով, արեգակի երես չեն տեսնում, որովհետև երբ նա լուսաւորում է, նրանք քնած են և այդ անկանոն կեանքին, բարձր դասին պատկանողների ջղային թուլութիւնը հետզհետէ աւելանում է: Օրը գիշեր դարձնելով մենք աւելացնում ենք ոգելից և թմրեցուցիչ ըմպելիքների գործածութիւնը և դրանով քայքայում ենք մեր ջըղային սիստեմը, զրկում ենք մեր ուղեղը մինչև ծայրայեղութեան աստիճանը: Նոյն իսկ պարլամենտների պատգամաւորները, քաղաքային վարչութեանց ձայնաւորները և այլն ձգտում են նիստեր կայացնել գիշերները և դա այն աստիճան զըրգռում է նրանց ուղեղները, որ միայն առաւօտեան դէմ են հանգստանում: Ուժեղ զգացումների պապակը սաստկանում է այն պատճառով որ մենք օրը գիշեր ենք շինում. կարծես թէ անհրաժեշտ է արբեցնել մեր ուղեղը, որ նա կարողանայ ընդունակ լինել զգալու...Հայրենասիրական խնդիրները չեն դատվում և վճռում ոգեկան հանգստութեամբ. Նրանց փաթաթում են համակրութեան և հակակրութեան փոթորկի փոշու մէջ. մեզ հիպնոզացնում են, մեզ ներշնչում են մոլեռանդութիւն:

Գրականութիւնը կորցնում է իր կենսաթրթիռ լուսաւոր լինելու իրաւունքը: Մեզ կարծես պէտք է կիրք, պէտք են գրիչներ, որոնք շնչեն կրքոտ ջղաձգութեամբ, պէտք են պաթոլոգիական հարցեր կամ բացառապէս հոգեբանական խորհրդաւոր նիւթեր: Գրգռուած ջղերը պահանջում են շարունակ աւելի և աւելի գըրգռում և մեզ կարողանում է գոհացնել միայն այն, ինչ որ տարօրինակ է, զռացող է ի լուր աշխարհի, դուրս է ամենայն կարգից: Եւ տարէց տարի, օր քան զօր աւելանում է այդ տարօրինակի, արտասովորի և գրգռչի պահանջը:

Պետութիւնները պիտի խառնուին երեկի այս տեսակ դրութեանը և օրէնսդրական ճանապարհով փոխեն. փոփոխել հարկաւոր է հետզհետէ սիստեմատիքաբար, բայց աներդհատ, հաստատամտութեամբ: Քաղաքները պիտի ընդունին այն դրութիւնը, որ առողջարար է, որ պահպանում է ազգաբնակութիւնը, որ ապահովում է նրա անդորրութիւնը: Թո՛ղ որ կէսօրը կրկին ստանայ իր սկզբնական նշանակութիւնը: Թո՛ղ որ աշխատութիւնը, դպրոցական դասատուութիւնն սկսուին արշալոյսից և վերջանան կէսօրին կամ գէթ երկու ժամ յետոյ: Թող խանութները փակուին կէսօրից յետոյ, թատրոնները տան իրենց ներկայացումները ժամը 4-ից մինչև 7-ը կամ 5-ից մինչև 8-ը և 9 ից մինչև 10 ժամի ընթացքում Թող ամենքը փակուեն ինչպէս փակուած են լինում գիւղում: Չգիտենք կարելի է արդեօք աւելի արմատական և միևնոյն ժամանակ աւելի անպաճոյճ և պարզ յեղափոխութիւն առաջարկել, քան այն, որ առաջարկում է նորվեգիական հեղինակ հրապարակախօս Բեռնսօնը:

Մեր դարում՝ ուր իւրաքանչիւր փոքր և մեծ, մասնաւոր և հասարակական չարագործութիւն ծածկուած է որ և է շռնչացող, աղաղակող յեղափոխական, մարդասիրական նպատակի մէջ, երբ դաշոյնն ընտրվում է իբրև սիրոյ նշանաբան, երբ ժողովրդի հանգստութիւնը խանգարվում է յանուն նրա երջանկութեան, երբ յեղափոխութիւն բառը դառել է ամենակեղտոտ գործիք բազմաթիւ աղանդաւորների, հոգեկան հիւանդների, եսամոլ հրէշների, որոնք ոչինչ ընդհանուր կապ չունին մարդկային սիրոյ հետ, այսպիսի ժամանակ Բեռնսօնի առաջարկած բնական յեղափոխութիւնը տասն և իննեորդ դարու ամենալաւ երևոյթների վերջին խօսքը պէտք է համարել:

Նշանաւոր է և այն որ երամականութեան զարգացած դարում, ուր իւրաքանչիւր մարդուց պահանջում են մի «հօտի», մի «բանակի» պատկանել... Բեռնսօնը հրում է իրենից ամենքին և ձեռը տալիս է բնութեան: Նա ոչ միապետական է, ոչ հասարակապետական, ոչ սօսիալիստ է, ոչ կոմունիստ, ոչ անիշխանական, ոչ ասկէտ է, ոչ անաստուած, ոչ պահպանողական է, ոչ ազատամիտ, ոչ ձախակողմեան է և ոչ աջակողմեան ու այդ բոլորի հետ միասին, դրանց բոլորից դուրս, դրանց բոլորից բարձր նա յեղափոխական է, բառիս ամենահամակրելի և ամենասուրբ նշանակութեամբ:

Բեռնսօնը բողոքում է բնութեան աղաւաղման դէմ, նա պահանջում է վերականգնել բնութիւնը, որին դուրս չէ խորշ տալու մարդս:

Բեռնսօնի «բնական» վարդապետութիւնն ամենևին նոյնը չէ, ինչ որ էր Ռուսոյինը, կամ է Տօլստոյինը: Ո՛չ: Սրա ասածների մէջ չկայ ոչ բնազանցութիւն, ոչ միստիքութիւն, և սա բնութեան մարգարէ չէ, այլ առաքեալ: Բեռնսօնը չէ կամենում «լուծել զօրէնս», այլ «լցուցանել»: Նա քաղաքակրթութեան ոչ մի փակտօր չէ ուրանում, այլ նրանց հրաւիրում է, պահանջում է նրանցից իսկական գործ կատարել, ծառայել իրենց ուղղակի նպատակին—մարդու երջանկութեան:

Նա բժշկութիւնից պահանջում է առողջապահութիւն (հիգիէնա), և չէ՞ որ բժշկութեան իդէալը առողջապահութիւնն է. չէ՞ որ միքստուրաները և դեղերը առողջապահական կանոնների խախտման հետևանքի թոյլ զօրաւիգներն են: Բեռնսօնը պահանջում է որ ցերեկը ցերեկ լինի և գիշերը՝ գիշեր. միթէ այս պահանջը չէ բովանդակում իր մէջ սօսիալական, տնտեսական ու քաղաքական ամենաբարձր իդէա: Նա ցանկանում է որ մարդու մարմինը, աչքը զգայարանքները, հետևաբար և ուղեղն ու

մացած և քիչ էլ վշտացած հեռացաւ բարի տիկինը, և Նեարդային ու թուլացած աւելի ևս քան երբէք Հէգուիգը յետ դարձաւ առանձնասենեակը:

Բաշուելով, տատանուելով կնքեց այդ նամակների կապոցը և վրան գրեց պրօֆեսոր Նէլսմայէրի անունը: Բայց իր խղճմտանքը հանգիստ չէր և կամենում էր արդարացնել իրեն: «Ես գեռ շատ եմ բինասարդ եմ, և շատ դառն է առանց կարեկցելու մեռնել: Ոչ մի մարդ չէ զուշակում իմ յուսահատութեան անդնդի խորութիւնը: Մէկը թող գիտենայ, թէ ինչ անասելի կերպիւ ես վշտակիր եմ եղել: Մէկը թող հասկանայ ինձ. մէկը թող ափսոսայ ինձ»:

Նա դուրս գալու համար հագուեցաւ և հրաժեշտի համար մի անգամ էլ անցաւ սենեակներով: Ամեն ինչ խօսում էր իր հետ, ամեն ինչ պատմում էր մեռած երջանկութեան մասին: «Իմ անցեալս սուտ է և ներգուած, դա չէ կարող իմ սիրտս շարժել» բայց հասնելով աստիճաններին գլխին, յետ դարձաւ բնակարանը: Հանեց այն զումարի նամակներին պահարանից և ձգեց կրակը: Պայծառ բոցն արծարծուեց, նամակները մոխիր դարձան. Հէգուիգը աչքերը յառեց բարակ, սև, ածխացած կտորների վրան և արագ հեռացաւ բնակարանից:

Ա. ԼԻՑԷՆԻ ԼԻՃԸ

Շառլոտտէնբուրգի կայարանը հասնելով մի գործաւորից հարցրեց ճանապարհը՝ նա դէպի արևմուտք ցոյց տըւաւ, ուր հարթ տարածութեան վրայ մի երկար անտառ էր ձգւում: «Ուղիղ դէպի առաջ գնացէ՛ք և տեղ կը հասնէ՛ք», և մի փոքր զարմացած նայեց քօղով ծածկուած այրուն, որ նոյեմբերի կէսին ոտով այդպիսի զբօսանք էր ուզում անել: Շուտով աւարտուեց անպատրաստ պողոտան և Հէգուիգը ոտք դրաւ նեղ կածանի վրայ, որ ձգւում էր չը ցանած ու քիչ խոտով ծածկուած արտերի միջով: Ինչպէս լաւ յիշում էր, որ իր մարդու պաշտօնակիցներից մէնը դաշտային զբօսանքի գնալիս Լիցէնի լճի կողմն էր առաջարկել: «Այդ Վիցլէբէնի նախկին կալուածումն է և բանաստեղծական դիրք ունի, ծառերի հովանու տակ, այն հարթութեան վրայ, որ է Շառլոտտէնբուրգի և Գրունէվալդի մէջտեղը: Չը գիտէք թէ ինչպէս սիրուն է այն հովանաւոր ուղին լճի շուրջը, բարձր ծառերով ու եղէգնով շրջապատուած: Կատարեալ գիւղական վայրեր են և ոչ ոք չի գալիս այնտեղ, ոչ ոքի չի ճանաչում Լիցէն լիճը, զուն է, պատմելով անգամ»:

Անսովոր կերպիւ վրդովուած իր ամուսինը պատասխանել էր. «Զը վերադարձէ՛ք խնդրեմ, այդ ունի և իր շատ հասկանալի պատճառները, մինչև այնտեղ հասնելը մարդ պէտք է ոտքով ամայի, անծառ անապատով անցնի, ես իմ բաժինս այս շոգին աւելի կը ջանայի Հաւէլը կամ Գրունէվալդը»:

Այժմ նա եկաւ վերջապէս այնտեղ: Ոչ մի կենդանի արարած չէր երևում, մեռած ընկած էր մի ամառային զբօսարան իր գնդակախաղարանով, ճոճանակով, սեղաններով և նստարաններով տերևաթափ ծառերի ներքև: Դաշտերն արդէն քաղուած էին, այստեղ այնտեղ փչախոտ էր բուսած ճանապարհների եզրին. մի փոքրիկ հիւղի շուրջը բարակ, չորացած ամառային ծաղիկները կախել էին իրենց տխուր գլուխները: Այժմ մօտեցաւ նա ծառերին, նրանց խառն ճիւղերի միջից փայլում էր լիճը և մի բոպէ Հէգուիգի աչքին կանգ առաւ: Փոքրիկ զառիվայրն լինելով, մտաւ նեղ և եղէգնով պատած կածանը: Փայլուն մակերևոյթի միւս կողմը տեսաւ մի փակուած, քայքայուած իշխանական տուն. անտառի մէջ խառն ձգուած պարտիզում ամբառնում էր մի սիւնազարդ ճեմելիք, և այն տեղ—քիչ միկուսի—պարտէզի վերջին ծայրում, մի տնակ: Այդ պիտի լինէր այդտեղ Տոնին սիրել էր և սպրել, այնտեղ ողբացել էր նորան Գէլլորբիլը, այնտեղ գոցել էր նրա աչքերը: Իրեն, խարուած, թողնուած ամուսնուն, մի այդպիսի գեղեցիկ վախճան չը պիտի վիճակուէր:

Յոգնած շուրջը նայեց նա: Ի՞նչպէս ամեն ինչ մահատենչ էր: Մի կողմը հակւում էին ծառերը իրենց տերևաթափ ճիւղերով դէպի լիճը, նման չիկահեր, թօռալոտաւոր աղջկան, որ իրենց մի անգամ էլ հայելու մէջ նայում են:

Թփերի վրայից յուսահատօր թաւալում էին թառամած տերևները և կորչում դորշաձոյր ճահիճի մէջ: Տենդոտ փայլում էր սաղարթը մի քանի ծառերի սևերի շուրջը: Դողդողում էր մեղմօրէն դեղին եղէգնը, և ադոտ յուսոյ նման կանչում էր վերջին անգամ ալցը:

Խաղաղ ժպտում էր նրա երեսին ճակատ:

Մինչ ինքը հանգստութ, կախարդուածի նման, եղերքով գնում էր, հասաւ մի կապած մակոյկի: Ջուրը ձգեց մակոյկը և լճի միջավայրում թող տուաւ որ անհատելի հոսանքը վանէ: Բարձրաձայն և ցաւալին բաբախում էր նրա սիրտը, անդամները փէր էին թռչում, աչքերի առաջ մթնեց: Նա կամենում էր և պէտք է մեռնէր, բայց վերջին վճիռը ծանր էր սակայն: Տատանելով և դողնաթափ ոտքի կանգնեց և ասուշ, յուսաբեկ հայեացքով շուրջն սկսաւ նայել:

Ահա թռաւ նա և սուզուեցաւ ջրի մէջ:

Գեր. Բ—ձ. Ն. Փ.

զգացմունքները թարմանան, կազդուրուեն առաւօտեան ցօղով և արեւոյտի ճառագայթներով և ոչ պիշերային բռնազբօսիկ ինքնատանջութեամբ և արբեցութեամբ։

Նա մարդուն առաջարկում է թողնել գիշերային ցնորքները և նրանցից առաջացած օպիումական պօէզիան և զուարճանալ իսկական պօէզիայով, որ կարելի է գտնել միայն բնութեան մէջ, առաւօտեան արշալոյսին և երեկոյեան վերջալոյսին։

Բերնսօնն առաջարկում է մարդուն օգտուել այն անգին բարիքից, որ շնորհել է նրան Աստուած իբրև հանգստութիւն քրտնաջան և երեքուն կեանքից։ «Պիշերը քնելը» ասում է Բերնսօնը, որ ցերեկը կարողանաս աշխատել և ապրել ու զուարճանալ։

Ինչ հասարակ ճշմարտութիւններ են մոռացել մարդիկ։ Բայց ինչ ուժեղ ձայն է լսւում այդ մոռացութեան կից. ինչ է նրա պահանջը. «Թող պետութիւնները իրենց օրէնքները յարմարեցնեն, համաձայնեցնեն բնութեանը»։ Եւ ո՛ր պետութիւնը կարող է նկատել այդ պահանջի մէջ «չարամտութիւն»։ Մի՞ւս կողմից, ո՛ր ձևական յեղափոխականը չի ամաչիլ կարդալով այդ պարզ, անպաճոյճ, իսկական արմատական յեղափոխական վարդապետութիւնը։

Ի՞նչ է եւրոպական և մեր քաղաքների կեանքը։ Նայեցէք այդ ուսուցչին. նա զուարճանալու, իր զրգռուած ջղերին նոր գրգիռ պատճառելու համար մինչև գիշերուան ժամը 4-ը, 5-ը ապրել է կամ ժողովարանում, կամ մի այլ զուարճութեան տեղում. նրա մարմինը գտնվում է ալքօհօլի ազդեցութեան տակ, իսկ միտքը թէ ալքօհօլի և թէ այն բազմաթիւ տպաւորութիւնների ներքոյ որ նա ընդունել է խաղալու, ուտելու և խմելու ընթացքում. արդ ուղեղը զրգռուած է, չէ կարողանում կենդրոնանալ ոչ մի առարկայի վրայ, և ահա այդ ուսուցիչը առաւօտեան ժամը 8-ին կամ տասնին պիտի գնայ մատաղսերունդը կրթելու...

Նայեցէք այդ բժշկի վրայ. նա լուսաբացին եկել է յոգնած մարմնով և զրգռուած ուղեղով, պառկել է զգեստով և երկու ժամից պիտի ընդունէ ջղային կամ կրծքային հիւանդին և այնքան համբերութիւն պիտի ունենայ, որ նրա հետ կարողանայ սիրով խօսել և նրա ցաւն իմանալ...

Ահա ձեզ և գրագէտը, հրապարակախօսը, նա դրծունի գրգռուած ընթերցողի հետ, նրա ջղերին կրկնապատիկ գրգիռ է հարկաւոր և ահա նա ճրագի լոյսի տակ յոգնած ուղեղով տալիս է առողջ կեանքին այն բազմաթիւ հիւանդ պատկերները, որ յոգնած ուղեղն ստեղծում է խաւարի անուրճների մէջ։

Եւ այդ այդպէս է բոլոր դասակարգերի մէջ. բարձր դասակարգը իր անկանոն կեանքով աղաւաղել է բնութիւնը և նոյնը հարկադրել է և հարկադրում է անել աւելի ստորին կոչուած դասակարգին։ «Ես պնդում եմ, ասում է Բերնսօնը, որ այն յեղափոխութիւնը, որ օրը կրկին օր կը դարձնի և գիշերը՝ գիշեր, մեր աչքը կը բացայայտ և մենք աւելի շուտ կը տեսնենք անհամար անարդարութիւնները, որոնք մեզ շրջապատում են և որոնց մենք դեռ ևս չենք տեսնում...։

Ս. Հ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՓՐԱՆՍԻԱ. — Անիշխանականների դէմ մշակուած օրինագիծն ընդունուեց և ընդունուեց անսպասելի մեծամասնութեամբ։ Նոյն իսկ այն պատգամաւորները, որոնք իրենց ներկայացուցիչ այս կամ այն ֆրակցիայի բողոքում էին և սկանդալներ էին անում այդ օրէնքի առթիւ, այնուամենայնիւ քուէարկութեան տուլեբի առաջ իրենց խղճին չկարողացան դիմադրել։ Կառավարութիւնն օպպօզիցիայից 105 ձայն աւելի վաստակեց, մինչդեռ վիճաբանութիւնների ժամանակ կառավարութեան աւելի ձայները միայն 30-40 էին հաշվում։ Ուրեմն Դիւպիւի և Գերէն հասան իրենց նպատակին, նոր օրէնքը պատն ընդունեց և հաւանական է որ ծերակոյտը շուտով կը հաստատէ այդ օրէնքը, որի քննութեան համար արդէն յանձնաժողով է ընտրուած։ Նոր օրէնքը երևի կըստկսի գործադրութիւն յուլիսի 18-ից և Լիոնի երդուեալների դատարանը իր նիստերը կրկայացնէ գռնփակ։ Ոչնչափ ֆրանսիական բնաւորութեան և առհասարակ արդարադատութեան սկզբունքներին հակառակ լինին գռնփակ նիստերը, այնու ամենայնիւ անիշխանականների դէմ զգուանքն այնքան սաստկացած է որ Ֆրանսիայի մեծամասնութիւնը ոչ մի բողոք չի արտայայտի այն խելօք զգացմունքի դէմ, որ անում է ֆրանսիական արդարադատութիւնը՝ թոյլ չտալով սկզբունքից, մտքից զուրկ մարդկանց յանուն օրինաց և արդարադատութեան քարոզել իրենց արիւնարբու և մարդատեաց վարդապետութիւնը հրապարակաւ, արդարադատութեան բեմից։ Նոր օրէնքի գործադրութիւնն անկասկած զժուարութիւնների կը հանդիպի, երբ սկսուեն առաջին դատերը ժամուլի զանազան օրգանների դէմ. բայց ինչպէս երևում է կառավարութեան ներկայացուցիչների բացատրութիւններից և նոյն իսկ մշակուած օրէնքի յօդուածներից և ոգուց, օրէնքը խիստ ընտրութիւն պիտի անէ անիշխանական մտքերի և սովորական յեղափոխական գաղափարների մէջ և պիտի հալածէ միայն այն օրգանները, որոնք բացարձակ առաքելութիւն են յանձն առնում անիշխանական գործում։

— Նոր օրինագծի քննութեան ժամանակ մինամարտի առթիներ էլ տրուեցին։ Պատգամաւոր Դէնուան իրեն ճառի մէջ թոյլ տուաւ վիրաւորական խօսքեր ֆրանսիական մամուլի վերաբերմամբ. «ժամուլի մի քանի օրգանները, ասաց նա, օգտըւում են կառավարութեան շնորհով «էժան ծախել իրենց թղթակցութիւնները...»։

...Այս խօսքերը, որոնք մի այլ տեղ գուցէ արհամարհուէին միայն, սարսափելի ազմուկ և շփոթութիւն պատճառեցին հրապարակախօսների օրթեակում։ Խոկոյն մի քանի անուններ գրուեցին և վիճակ ձգեցին թէ ով մենամարտի Դէնուայի հետ. վիճակն ընկաւ «Libre Parole»ի աշխատակցին, նոյնպէս վիճակով ընտրուեցան վկաներ. բայց երբ այդ վըկաները ներկայացան Դէնուային, նա ներողութիւն խնդրեց և ասաց թէ ոչ ոքի վիրաւորելու նպատակ չէ ունեցել և այդպիսով մենամարտութիւնը չկայացաւ։

ՉԻՆԱՍՏԱՆ.— Չինաստանն սկսում է առաջ քշել իր զօրքի հեղեղը. նրա կարգադրութիւններից երևում է որ յոյս դնելով իր երկրի բազմամարդութեան վրայ, նա կամենում է ճափոնացոց ամեն մի գնդակի դէմ հարիւր մարդ դուրս բերել և այդպիսով վերջ ի վերջոյ յաղթութիւն վաստակել։ Միւս կողմից ճափոնեան շարունակ հարուած հարուածի վրայ է հասցնում Բօդդօխանի կայսրութեան։ Անգղիան կատարեալ խաղաղասիրական դերը է բռնել արևելեան այդ վտանգաւոր խնդրում և առաջարկում է եւրոպական պետութեանց միջամտել՝ երկու պետութեանց արիւնահեղ կռուին վերջ տալու համար։ Սակայն այդ առաջարկութիւնից նոր վտանգ է ծագում.—Եւրոպական և ռուս լրագրները հարց են բարձրացրել թէ ներկայ խնդիրը վճռելուս եւրոպական ո՞ր տէրութեան կարծիքներին պէտք է նախապատուութիւն տալ։ Այս հարցը ծագում է այն միտումից, որ ամեն մէկը ցանկանում է աւելի ազդեցութիւն ձեռք բերել Չինաստանի, Ճափոնի և առհասարակ խաղաղ ովկեանոսի ափերի վրայ։

«ՄՐՉԱԳԱՆՔԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԴՈՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Յուլիսի 21-ից.

ՊԵՏԵՐԲՈՒՐԴ.— Մեծ իշխանուհի Կսենեայ Ալէքսանդրովնայի պսակադրութիւնը Մեծ Իշխան Ալէքսանդր Միխայլովիչի հետ նշանակուած է Պետերհօֆի պալատում յուլիսի 25-ին. նոյն օրը երեկոյեան կը լինի հանդիսաւոր ժողով և երաժշտական համաժողով, որից յետոյ Մեծ Պսակադրուածները կը գնան ժամանակաւոր պալէս Ռօպշա։ Յուլիսի 28-ին Մեծ Նորապսակները շնորհաւորութիւնները կընդունեն ձմեռային պալատում, իսկ երեկոյեան Հանդիսաւոր ներկայացումը կը լինի Պետերհօֆի Թատրոնում։

Մեծ իշխանուհի եկատերինէ Միխայլովոյի մահուան առթիւ արքունի քոյրը սուգ, բարձրագոյն հրամանով վերջանում է յուլիսի 24-ից։

1895 թուի փետրվարի 14-ից Պետերբուրգում կը բացուի տպագրական գործի ցուցահանդէսը։

Նշանակուած են. — Վարկային բաժնի գլխաւորը Պլէսկէ պետական բանկի կառավարիչ Ֆուկսվոկու վոխարէն, նախարարութեան գլխաւոր հսկիչ յանձնաժողովի անդամ Մալեշեվսկի Պլէսկէի վոխարէն, իսկ Ֆուկսվոկի երևելի տից նախարարութեան խորհրդի անդամ։

ԼՕՆԴՕՆ. — Մեծ Բրիտանական կառավարութիւնն անյապաղ կրկայտարարէ իր մտադրութիւնը չեզօք գիրք բռնել կօրէական պատերազմի խնդրում և իր շահերը ապահովուելու համար անհրաժեշտ միջոցներ ձեռք կ'առնի։

Խմբագիր-Հրատարակիչ՝
ԱՐԳՈՒՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿՈՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԻԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիւրակի օրերից.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԻԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վներական (սիֆիլիս) հիւանդութիւնների։

Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի և նեարդային հ.

Դ. Գ. ԲՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժամը ներքին, երեխայոց և կանանց հ.

Ա. Գ. ԴՈՒԲԿՕ—1—1½ ժ. ականջի կոկորդի և քթի հ.

Կին-բժիշկ ՏՈՒՐԲՈՎԻՉ—12½—1 ժ. կանանց հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՅԱՆԵՐԸ՝

Ա. Գ. ԴՈՒԲԿՕ—6—7 ժ. սիլիֆսի և մեզի ու սեռական օրգանների հ.

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԵԱՆ—7—7½ ժ.

Ի. Ե. ՓՐԱՆՑԻՈՒՍ—7—7½ ականջի, կոկորդի և քթի ու նեարդային հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ.

Ա. Գ. ԴՈՒԲԿՕ քիմի-խոշորացուցական հետազօտութիւն է անում մեզի, խլխլ, արեան, կաթի և այլն.

Վճար 50 կ.։ Համավորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցումը ընդունվում են և գիշերօթիկ հիւանդներ.

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Նաւասարդեան։

ՔԱՂԱՔԱՑԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

(Մոսկոսանեան փ., տ. Կուզանեանի, № 15. հիմնել են Թիֆլիզի քաղաքացիները երեք եկ հիւանդների համար 1866 թ. ապրիլի 4-ի չիշատակին)։

Հիւանդների ընդունելութիւն ամեն օր, բացի կիրակի օրերից, ձմեռն առաւօտեան ժամը 9—1, ամառը (յունիսի, յուլիսի և օգոստոսին) առաւ. ժամը 8—12.

Վ. Մ. Սրճեան — ներքին, երեխանց և ջղային հիւ. ժամը 10½—12 ամեն. օր։

Կ. Ա. Ղազէ—ներքին և երեխանց, ժ. 10½—12 ամեն օր։

Ֆ. Ֆ. Ֆոլբէյնդ—խլխլուրգ. և մեզի անդ. ժ. 11—12 ամեն օր։

Կին-բժ. Մ. Ա. Խոհոլեանց—կանանց ժ. 9—11 ամեն օր։

Ն. Գ. Կոռոլէան — ներքին և երեխանց, ժամը 12—1 ամեն օր։

Ս. Ն. Լիւլին—խլխլուրգ. և մեզի անդ. ժ. 11—12 ամեն օր։

Մ. Ա. Մ'էրտէան—ներքին և վներական, ժ. 12—1 (երկ. չոր. և շաբ. օր.)։

Ա. Գ. Մոռչոյե—ականջի, կոկորդի և քթի, ժ. 9—10 ամեն օր, բացի հինգշաբթի օրուանից։

Կին-բժ. Լ. Ե. Մոռնդրիոյա—կանանց, ժամը 11—12 ամեն օր։

Ե. Ա. Ռոստոմ—ներքին, երեխանց և ատամի, ժամը 9—10 ամեն օր։

Մ. Ա. Ռէյդոլմէզ—ներքին և ջղային, ժամը 11—12 ամեն օր։

Գ. Ն. Սթէփանեան—ներքին, մեզի անդ. և վներական, ժամը 11—12 ամեն օր։

Գ. Ա. Թարխանեան — ներքին և խլխլուրգ., ժ. 11—12 ամեն օր։

Կին-բժ. Ս. Ա. Զիկոյ—աչքի և կանանց, ժամը 11—12 ամեն օր։

Ասոճաբոյժ Ա. Օ. Օչբէլէ—ատամներ, ժամը 10—11 ամեն օր։

Կոնսուլտասիոնը երեքշաբթի և ուրբաթ օրերը ժ. 12—1. Ծաղկի պատուաստումն—չորեքշաբթի և շաբաթ օրերը, ժամը 9—1։

ՀԱՒԻԱՐԱՒԱՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

(Հալէբեինակայա փ., տ. Տէրտէրեանի)

Մ. Ա. Քալանթարեան—ժամը 11—12 ամեն օր։

Կին-բժ. Մ. Ա. Խոհոլեան—կանանց, ժ. 11—12 երեքշաբթի և ուրբաթ օրերը։

ԽԱՐԲՈՒԽԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

(Ճանիա վօրօտա, տ. Էնվիրաճեանի)

Գ. Ֆ. Տէր-Ասոռսեան—ժամը 11—12 ամեն օր։

Կին-բժ. Մ. Ա. Խոհոլեան—կանանց, ժ. 11—1 երեքշաբթի և ուրբաթ օրերը։

Ծոռնօրեն.— Հարուստ անձերին բըժշկական խորհուրդ և դեղեր տրւում են ձրի։

Քաղաքային բուժարանի կառավարիչ՝—
Գ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

ՓՕՍՏԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ ՎՐԱՑ ՊՕՏԵՐԲԱՋՄԱՆԱՆ ՀԱՆԳՊՈՒՐՅՈՎ

—

Թիֆլիզից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան 7 ժամին, գիշերում է Մլէթի կայարանում, Վլադիկավկազ է հասնում հետեւեալ օրը ժամը 7-ին երեկոյեան։

Հինգ հոգու տեղ ունեցող կառքը դարձեալ ուղևորվում է առաւօտեան 9 ժամին, գիշերում է Պասանաուր կայարանում, հասնում է Վլադիկավկազ հետեւեալ օրը ժամը 9 և 50 րոպ.-ին երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում Վլադիկավկազ հետեւեալ օրը ժամը 6 և 50 րոպէին երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) դարձեալ ուղևորվում է ճաշից յետոյ 5 ժամին և առանց գիշերելու հասնում է Վլադիկավկազ հետեւեալ օրը 6 ժամին 50 րոպ. երեկոյեան։

Վլադիկավկազից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան ժամը 7-ին, գիշերում է Մլէթի կայարանում, Թիֆլիզ է հասնում հետեւեալ օրը ժամը 7-ին 25 րոպ. երեկոյեան։

Հինգ հոգու տեղ ունեցող կառքը դարձեալ ուղևորվում է առաւօտեան ժամը 9-ին, գիշերում է Գուդաուր կայարանում, հասնումէ Թիֆլիզ հետեւեալ օրը ժամը 9-ին երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիզ հետեւեալ օրը ժամի 6-ին և 40 րոպէին երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) դարձեալ ուղևորվում է ճաշից յետոյ ժամը 5-ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիզ հետեւեալ օրը 8 ժամին 26 րոպէին երեկոյեան։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՕՐԱԳԱՐ ՔԱՂԱՔԻ ՇԻՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻՆ հարկաւոր է մի ուսուցիչ Ռուսերէն և Հայոց լեզուի։ Թոճիկը տարեկան 500 րուբլի է։

Ցանկացողը պէտք է դիմէ հետեւեալ հասցէով *Армянскъ* (Товрической губ.) Попечителю Армянскаго Приходскаго Училища. (30—15)

Նոր լոյս տեսաւ
ԻՍԱՀԱԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ
ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ
ՍԱՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՁԱՒ-
ՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ
Գինն է 40 կոպ.
Ծախւում է Կենդրոնական գրավաճառանոցում և հեղինակի մօտ։

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԴԻՒԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Դ. և Ե. գրքերի համար, որոնք կը պարունակեն բազմաթիւ պատմական գրագրու
Թիւններ ԾԸ և ԾԹ դարերի։

Իւրաքանչիւր գիրքը բաղկացած կը լինի 12 մեծադիր թերթից։

Երկու գրքի բաժանորդագինն է 3 ռ.։ Առաջին գիրքը մամուլի տակ կը մտնի հէնց որ բաժանորդների թիւը 200-ի կը հասնի։

Ծանօթ.։ Ա.-Բ. և Գ. գրքերը տպուած են և արժեն 9 ռ. բոլոր 5 գրքերը ստանալ ցանկացողը վճարում է 10 ռ. և ստանում է մի օրինակ 1895 թուի պատկ օրացոյց մի
Հասցէն.—Տփխիս. ԴԻՒՑ ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑ, կարելի է դիմել և „ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ
ԴՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԸ“

Առաջիկայ սեպտեմբեր (Հոռի) ամսին լոյս կրտեսնի իմ կազմած առաջին Հայերէն

ՀԱՏՈՒԱԾԱԿԱՆ (ՊԱՏԻ) ՕՐԱՑՈՅՑԸ
1895 թ.
ՀՅՐՈՒԻՍՏ ԹԱՄԱՆԱԿՊԱՐՈՒԹԵԱՄԲ
ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տպւում է ընտիր թղթի վրայ, մաքուր տպագրութեամբ ոսկեթոյլ տախտակով
Առանձին ուշադրութիւն է դարձած լ ն ա մ ք ով կ ա զ մ ե լ ու վրայ

ՊԱՑՄԱՆՆԵՐԸ

Մինչև	50	օրինակ գնողին	15%	զեղչ
»	100	» »	20	»
»	200	» »	25	»
»	300 և աւելի	»	30	»

Ճանապարհի ծախքը գնողի վերայ է։
Պահանջը լինում է միշտ կանխիկ կամ վերադիր վճարով։
(Մինչև սեպտեմբեր պահանջողը ճանապարհածախքը չէ վճարում)։

Իմ աշխատութիւններն ստանալ ցանկացողները կարող են դիմել 1) ուղղակի ինձ—Тифлисъ: Священнику Сааку Саакяну 2) „Կենդրոնական գրավաճառանոց“։
Ինձ դիմող կանխիկ վճարողներն ստանում են 20% ի քաց առեալ ճանապարհածախսը։

ԱՇԱԿԵՐՏԱՑ ՄԱՍԸ

1. Սրբազան պատմութիւն Հ ի ն ուխտի Ե. տարի 40 կ.
2. Սրբազան պատմութիւն Ն ո ր ուխտի Դ. տարի 40 »
3. Դասատետր կրօնի . . . . . Դ. տարի 30 »
4. Դասատետր կրօնի . . . . . Բ. տարի 20 »
5. Դասատետր կրօնի . . . . . Ա. տարի 15 »

Այս Բոլոր դասագրքերը Հոչակուած են հայաբնակ բոլոր գիւղաքաղաքների Հայոց դպրոցներում։

ՈՒՍՈՒՑՉԱՑ ՄԱՍԸ

6. Դասագիրք կրօնի Հ ի ն ուխտի ուղեցոյց 1 ռ. 75 կ.
7. Դասագիրք կրօնի Ն ո ր ուխտի ուղեցոյց 2 » 5 »
8. Մի քանի խօսք հայ կրօնուսուցիչներին — 10 »

Միաբան Մղոնոյ՝ Սահակ Հոհաննէս Սահակեանց։
(10—5)

ՎԱՃԱՌԱԿԱՆ

ՍՏԱՆԻՍԼԱՎ ՉԱՐԱԽՉԻԱՆՈՎԻ

Articles de Paris et Nouveautées. Stanislav Charakchianoff

MAISON FONDÉE EN 1870

(Դվօրցովայա փողոց, շտաբի հանդէպը)

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՆՈՐԱԶԻ ԵԻ ԳԱԼԱՆՏԵՐԻԱՑԻ ԱՊՐԱՆՔՆԵՐ.—

ԿՕՐՍԵՏՆԵՐ 2 ռ. 50 կ.-ից սկսած։ ԳԼՈՒԽԱՐԿՆԵՐ տղամարդկանց համար։ ԱՆՈՒՇԱՀՈՒՈՒԹՈՒՆՆԵՐ—անուշաբոյր օծանելիք՝ գլխաւոր գործարաններից։ Շեռնոցներ, գուլբաներ, Հովանոցներ, ծաղիկներ, Հովհարներ, այբօմներ, նեսեսէրներ, պօրտ-մոնէ։ Բիւրեղեայ, յաղճապակեայ զարդարանքի իրերէ՞ններ։ Ձեթեղ իրեր ընծաների համար, խաղալիք և տիկնիկներ։

Օտարաքաղաքացոց պատուէրները կատարվում են ամենայն ճշդութեամբ։
(100—21)

ՆՈՐ ԲԱՑՈՒԱԾՔ Է ՄԻՑԵՏՈՒԿ

ՊԱՀԵՍՏ

ԵԿԱՏԵՐԻՆԵՆՓԵԼԳ

ԿՕԼՕՆԻԱՑԻ ՓԻՆԻՆԵՐԻ

ՊԱՀԵՍՏՈՒՄ ԾԱԽԻՈՒՄ ԵՆ ԱՄԵՆԸՆՏԻՐ ԲՆԱԿԱՆ, ՁԱՇՈՒ ԵԻ ԴԵՍՍԵՐՏԻ ԳԻՆԻՆԵՐ

ԻԶԱՖԵԼԼԱ

Նոյնպէս կան ճաշու ախորժահամ սիլակ և կարմիր գինիներ։
Սիլակի շիշն արժէ 13—25 կոպէկ, կարմրինը՝ 15—30 կոպէկ։
Դեսսերտի «Իզաբելլա» գինիների շիշն արժէ 40 և 50 կոպէկ։
Պահեստը գտնւում է Տփխխսում, Միքայէլեան փողոցում, Անտրոսոնի տանը № 100 քաղաքային պուտալին ոաժանմունքի կողքին։
(40—16) ՅԱՐՕՒԱՆՕՓ Ա. Օ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՎԱՃԱՌԱԿԱՆ

Օ. ՉԻՔԵՐՏԻ

(№ 7, Դվօրցովայա փողոց, տ. Սարաջևի, № 7)

ՍՏԱՑՈՒԱԾ ԵՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ

ԻՍԿԱԿԱՆ ՃԱՊՈՆԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԻՐԵՂԷՆՆԵՐ

ԱԼՔՕՄՆԵՐ, ԻՐԵՂԷՆՆԵՐ ՓԱՂՈՍԿՐԻՑ, ԿԱԾՈՒՑ ԵՒ ՄԵԼԽԻՕՐԻՑ
(150—61)

Дозволено цензурою. Тифлисъ, 23 Іюля 1894 года.

Տպարան Ե. Մարտիրոսեանցի

Типографія И. Мартиросіанца. на Орбел. ул., № 1—8